№ 184 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 23

1908

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ" Базарная ул. д. Тамамшева № 16. կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

№ 184 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 23

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱԶԱՏԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲ.
Առանձին ՄԷԿ րուբլի
Ամերիկա տարեկան . 6 դօլար
Եւրօպա » . 30 ֆրանկ
Պարսկաստան » . 10 րուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել . . . 40 կոպ.

ԹԻՖԼԻՍԻ ԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
սրանով յայտարարում է, որ գնահատիչ մասնաժողովի անդամ Ս. Ն. Կազախովը ԿՈՐՑՐԵԼ է անդրկովկասեան երկաթուղու Զանգար կայարանի և Եկատերինենֆելդ գաղութի միջև բանկի գործերը՝ հետեւեալ կալուածների գրաւադրութեան բոլոր փաստաթղթերով. 1) Եղիազարովների, Եղիազար և Ստեփան Վարդանեանների № 167—1881 թ., 2) Սողոմոնեանց Յովս. Անդրէևիչի № 185—1881 թ.։
Այդ գործերը գտնողին խնդրվում է ներկայացնել կամ ուղարկել այդ գործերը բանկին, որի համար կը ստանայ լաւ վարձատրութիւն։
(առ.) 3—1

Հաշուապահական եւ Գրասենեակային
ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
ԹԻՖԼԻՍԻ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻՆ ԿԻՑ
(Ութերորդ տարի)
Կուրսերում աւանդվում են. հաշուապահութիւն, առևտրական թղթակցութիւն, առևտրական օրէնսգիտութիւն և գեղագրութիւն։ Ցանկացողներին սովորեցնում է գրող մեքենայի վրա աշխատել։
Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից 1908 թ.
Կուրսերը շարունակվում են ոչ պակաս 6 ամսից։ Պարապմունքները տեղի են ունենում երեկոները, շաբաթական երեք անգամ։
ՈՒՆԿՆԴԻՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԻՔ
Ամբողջ կուրսի վճարն է 40 րուբլի
Խնդիրները—Թիֆլիսի առևտրական դպրոցի դիրեկտորի անունով—ընդունվում են դպրոցի գրասենեակում՝ առաւօտեան ժամը 10-ից մինչև 12-ը։
Դպրոցի դիրեկտոր՝ Գ. Գեխտման
առ. (ապ.) (Հ. 2.) 12—9

ԱԶՈՅԵԱՆԻ
Ռուսական բաղանիքներ
Չուղուրէթ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ դիմաց
Հեռախօս № 718.
Բաղանիքները բաց են առ. ժամը 6-ից մինչև գիշերվայ ժամը 12-ը։
Գին 11 նոմերներ 80 կոպէկից մինչև 1 ր. 30 կ. մի ժամը։ Նոմերները ունեն առողջապահական բոլոր յարմարութիւնները (բժշկ. դուշեր, մարմարեայ վաննաներ ևայլն)։
Կանանց և տղամարդկանց ընդհանուր լողանալու (общія) սենեակները կարգաւորված են բոլոր յարմարութիւններով։
Ջիմնաստների համար յատկացված կայ մի ընդհանուր սենեակ։ Ջուրը՝ Կուրի ջուրն է, որ յայտնի է իր լաւ յատկութեամբ. մանրաղնին կերպով զտվում է ամերիկական մեքենական զտիչ-գործիքի միջոցով։ Գոյութիւն ունեցող բոլոր պակասութիւնները վերացված են։ Բաղանիքը նորերս վերանորոգված է և կահաւորված է մաքուր։ Նոմերների և ընդհանուրի լողանալու տեղի գները առ. ժամը 6 ից մինչև ցերեկվայ ժամը 4 ը բաւականաչափ իջեցված են։
(առ.) (10, 13, 17, 21, 23, 26, 29 օգ. 3, 6, 10 սեպտ.) 10—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
(Тифлисъ. Сололаки, Лермонтовская улица № 15)
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից։ Ամեն օր, առաւօտեան ժամը 10-ից մինչև 12 ը, և երեկոյեան 4-ից մինչև 6 ժամը։ Ծրագիրը և կանոնները տրվում և ուղարկվում են ցանկացողներին ձրիապէս։
(Ե. 2.) առ. 10—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
ԱՌԱՋԻՆ
Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ
(Վորոնցովի արձանի հանդէպ)
Կատարվում է ՀԱԿԱԽՕԼԵՐԱՅԻՆ ՊԱՏՈՒԱՍՏՈՒՄՆ 9—2 ժ. առ. և 5½—7 ժ. եր.
Վճար իւրաքանչիւր պատուաստման համար 1 ր. 50 կ.։
(առ.) 15—3

ՄԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

—

Այս ծանր օրերում, որոնք բաժին ընկան Թիւրքահայաստանին սարսափելի կոտորածներից յետոյ, առանձին հոգատարութեան առարկայ դարձան ջարդված ընտանիքների որբերը։

Թէ հայերը և թէ օտար բարերարները հանգանակեցին գումարներ որբանոցներ պահելու և որբերին խնամելու համար։ Ջանշեանի առանձին ջանքերով աջողվեց բանալ մի շարք որբանոցներ, որոնք գործեցին մի քանի տարիներ, մինչև որբերը մեծացան և կեանքի մէջ մտան։ Միւս որբանոցներն էլ կրճատեցին իրանց գործունէութիւնը կամ փակեցին։

Բայց կենտրոնական այնպիսի կէտերում, ինչպէս օրինակ Վանն էր, որոնց շուրջը գտնվում էր մեծ հայ ազգաբնակութիւն, որբանոցները շարունակվում էին լցվել նոր որբերով շրջակայքից և կարօտութիւն էր զգացվում հոգատարութիւն սահմանել անտէր-անտիրական մնացած մանուկների համար։

Ներկայումս պահպանութեան կարօտ է Վանի որբանոցը, որը յայտնի է «Սալնապատի ս. Գրիգորի աշկանց որբանոց» անունով։ Նա հիմնված է 1897 թւին կոտորածներից յետոյ։ Իր այդ անունը ստացել է այն պատճառով, որ նրա պահպանման համար սկզբում նշանակված էր Սալնապատ վանքի եկամուտը։ Բայց յետոյ պարզվեց, որ այդ եկամուտը շատ քիչ է, մինչդեռ որբերի թիւը մեծ է և նրանց համար պահանջվող ծախքերը պատկառելի։

Որբանոցի պահպանման և կառավարութեան համար ընտրված յատուկ հոգաբարձութիւնը տարիներ շարունակ հանգանակել է գումարներ և այժմ էլ զգալով նիւթական միջոցների պակասութիւն՝ սպասում է, որ Վասպուրականի այն ազգայինները, որոնք գտնվում են աւելի լաւ վիճակի մէջ, չեն մոռանայ բաժին հանել իրանց կենտրոնաքաղաքի որբանոցին, որ ոտքի է կանգնեցրել այնքան մատաղահաս որբերի։

Մեզ յայտնի է, որ Վասպուրականի այն պանդուխտների շրջանում, որոնք տարագիր են մեր երկրում, հարց է յարուցված կատարել կանոնաւոր հանգանակութիւն իրանց մէջ և գոյացած գումարները պաշտօնական մարմինների միջոցով հասցնել որբանոցի հոգաբարձութեան։

Պէտք է նկատել, որ որբանոցին օգնում են զանազան տեղերի հայեր, բայց կարիքը աւելի մեծ է քան այդ օգնութիւնը, և վանեցիները պէտք են զգացել ամեն տարի յատուկ հանգանակութեամբ լրացնել որբանոցի եկամուտի պակասը։

Ովքե՞ր են օգնել և օգնում որբանոցին։

Նախ և առաջ Սալնապատի վանքը իր արդիւնքներով։ Այդ վանքը, որ ունի մօտ 70 չափ անջրդի, 30 չափ ջրովի հողեր, արօտներ, խոտահարքներ, ոչխարների հօտ, կարողանում է հայթայթել այնքան արդիւնք, որով հնարաւոր է պահպանել 16 որբ։

Այնուհետև, ինչպէս մեզ հաղորդել են վանեցիները, Կ. Պոլսի պատրիարքարանը տալիս է տարեկան 5 ոսկի, երկու ամերիկուհի 12 ոսկի երկու որբի համար, Վարնայի հայերը պահել են 6 որբ, Եգիպտոսի որբախնամը 8, կարնեցի Ա. Ջրբաշեանը տուել է 4 ոսկի մէկ որբի համար, հանգուցեալ տիկին Նազիրեանը ուխտել է երեք տարի՝ յատկացնելով 30 որբի համար 65-ական ոսկի, Ռուսաստանում եղած վասպուրականցիները անցեալ տարի տուել են 30 ոսկի, իսկ այս տարի դեռ չեն լրացրել հանգանակութիւնը. նրանք կարողացել են ժողովել մինչև այժմ 19 ոսկի, բայց մտադիր են շարունակել հանգանակութիւնը և լրացնել պակասը։

Երրորդ՝ որբանոցը պարունակում է որբերի դեռ եւս մեծ թիւ, այն է 50 հոգի, որոնց պէտք է թէ պահել-պահպանել և թէ նրանց որոշ աստիճան մտաւոր կրթութիւն տալ ու մի քանի արհեստներ սովորեցնել։

Որբերը թշուառութեան մատնված ժողովրդի զաւակներն են, որոնց համար պէտք է ծնողի և հոգատարի պաշտօն կատարի հասարակութեան այն մասը, որ աւելի բարեկեցիկ է և ապահով։

Վասպուրականցի գործողները սիրում են իրանց որբանոցը և պատրաստակամութիւն են յայտնում պահպանել նրան կանոնաւոր հանգանակութիւններով։

Ցանկանում ենք այդ գործողներին աջողութիւն և յորդոր ենք կարդում Վասպուրականի հայերին աջակցել որբանոցի հոգաբարձութեանը նուիրատուութիւններով, որպէսզի աղէտի օրերում թշուառացած մանուկները կարողանան մտնել կեանքի մէջ՝ օժտված կրթութեամբ և ձեռքի արհեստով։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հաջիբենդ, 21 օգոստոսի

Եւլախի մօտերը կողոպտել են չորս հանրակառքերի և երկու կառքերի ճանապարհորդներին։ Դէպքի տեղը մեկնեց գաւառապետը։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 21 օգոստոսի

Բժշկական խորհուրդը լսեց գլխաւոր բժիշկ Բերդէնսօնի զեկուցումը խաղողի մնասակարութեան մասին խօլերայի ժամանակ։ Զեկուցողը մատնանշեց որ խօլերայի ժամանակ վտանգը գոյութիւն ունի առանձնապէս խօլերայով վարակված տեղերից բերվող խաղողից։ Ցանկալի է, որպէս զի համաճարակը երևալու դէպքում ազգաբնակութեան մէջ ճշգրիտ տեղեկութիւններ տարածվեն խաղողի այն պայմանների մասին, որոնցով պէտք է կատարվի նրա գործածութիւնը։

Խորհուրդը համաձայնեց զեկուցանողի կարծիքի հետ։ («Հ. Գ.»)

—

«Баку» լրագիրը հետևեալ հեռագրական տեղեկութիւններն է ստացել Պետերբուրգից.

Մինիստրների խորհուրդը մտադիր է միջնորդութիւն յարուցել Թագաւորի առաջ զինուորական դրութիւնը ամեն տեղ փոխարինելու արտակարգ ու սաստկացրած պահպանութեամբ։

Նորից լուրեր տարածվեցին, որ արդարադատութեան մինիստրութիւնը մշակել է մասնաւոր ամնիստիա շնորհելու մի նախագիծ, որի յայտարարումը սպասվում է ձմեռվայ սկզբներում։

Մինիստրների խորհուրդը մտադիր է կանոնաւորել տեղական իշխանութիւնների կողմից հրատարակվող պարտադիր որոշումները՝ պարտաւորեցնելով նահանգապետներին, քաղաքապետներին և գեներալ-նահանգապետներին նախապէս հեռագրական յարաբերութիւն սկսել այդ մասին պրեմիեր-մինիստրի հետ։

Մինիստրների խորհրդի նախագահ Պ. Ա. Ստոլիպինը և ժողովրդական լուսաւորութեան մինիստր Շվարցը եկան այն եզրակացութեան, որ Օդեսսայի գեներալ-նահանգապետ Տոլմաչևը բաւականաչափ հիմունքներ չէ ունեցել Օդեսսայի համալսարանի պրոֆեսորներին հեռացնելու համար։

Մոսկվայի համալսարանի վարչութեան յարուցած միջնորդութիւնը, նախկին ազատ ունկնդրուհիների մնալը համալսարանում թոյլատրելու մասին, մերժված է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կողմից։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

—

Թաւրիզից երէկ եկած մի ճանապարհորդ, որ մեկնել է այդ քաղաքից 4 օր առաջ, հետևեալ հետաքրքրական տեղեկութիւններն է հաղորդում։

Ներկայումս դրութիւնը այսպէս է. Նախկին սադրազամ Էյն-ուդ-Դօվլէն, որ նշանակված է Ատրպատականի ընդհանուր նահանգապետ փոխարքայի իրաւունքներով, բանակ է խփել քա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓՈԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

(Սեփ. թղթ.)

Կ. Պոլիս, 11/24 օգոստոսի

Կ. Պոլիսը հրդեհների քաղաք է, par excellence։ Չը կարծեմ թէ աշխարհի որևէ մասում, նոյնիսկ Բագւում, նաւթահանքերում, այնքան յաճախ հրդեհներ լինեն, որքան այստեղ։ 20 օր է այստեղ եմ. եթէ չեմ սխալվում, 3 օրը մի անգամ հրդեհ է պատահել։ Այնպէս է կարգադրված, որ պոլսեցիք, քաղաքի որ ծայրն էլ բնակվեն, անպատճառ տեղեկութիւն կունենան թէ կրակը որ կողմն է երևացել, և այս՝ մանաւանդ գիշերը, որովհետև գիշերային պահապաններն իրանց ահագին մահակները սալայատակներին խփելով աղաղակում են, թէ այս-ինչ տեղ հրդեհ է ծագել, և ամբողջ Կ. Պոլիսը զարթնում է դրանց աղաղակներից....

Բայց ինչ որ ես այսօր տեսայ, գերազանցում է Կ. Պոլսի հրդեհների մասին իմ ամբողջ երևակայածը։ Շատ տխուր ամսագարձ ունեցաւ օսմանեան նորածիլ սահմանադրութիւնը։ Մի ամիս առաջ ժողովուրդը խրախճանք էր անում իր անակնկալ կերպով գտած ազատութեան մասին, իսկ այսօր ճիշտ նոյն օրը տասնեակ հազարաւոր հոգի—օսմանեան քաղաքացիներ—շնորհիւ կրակ բաղդի անողոք հարուածի՝ կորցնում են իրանց բովանդակ ունեցածն և մնում են առանց ծածկոյթի։ Երէկ Բօսֆորի հեռաւոր ծայրից արդէն տեսնում էինք Ստամբօլի կողմն ահագին ծխի ամպերն և հետաքրքրութեամբ լուր էինք սպասում, թէ որտեղ և ինչ տարածութեամբ էր հրդեհը։ Հրդեհն սկսել էր կէսօրվայ ժամը 2-ին և շնորհիւ սոսկալի քամու՝ այնպիսի ահագին տարածութիւն էր բռնել, որ Ստամբօլի և Պէրայի կողմերը բոլոր հրդեհաշէջ խմբերը չէին կարողացել նրա առաջն առնել և գիշերվայ ժամը 8-ին յատուկ շոգենաւով՝ Բօսֆորի ափերի հրդեհաշէջներին տեղափոխում էին Ստամբօլի կողմը. օգնութեան էին եկել նաև պատերազմական նաւերի խմբերը, բայց չը նայելով այս ամենին, որոնք իրօք շատ վատ են կազմակերպված, 3000 ի մօտ տուն, խանութ, մզկիթ, խան և այլ շէնքեր հրոյ ճարակ են դառնում։ Այս առաւօտ իջայ քաղաք և անմիջապէս գնացի հրդեհի տեղը։ Կրակը տևել էր համարեա 12 ժամ։ Սոսկալի տեսարան էր բացվում դիտողի աչքին։ Թիֆլիսի Հալաբարի մեծութեամբ մի բնակավայր ներկայացնում էր աւերակների մի ընդարձակ կոյտ։ Այրվել էին 30 թիւրքական թաղեր։ Այս կողմը քրիստոնեաներ ոչ միայն չեն բնակվում, այլ երբեք չեն էլ այցելում։ Այդ պատճառով էլ հրկիզեալները գրեթէ բոլորն էլ, ի բաց առեալ մի քանի քրիստոնեայ և հրեայ խանութպաններ, մահմեդականներ են, և շէնքերն էլ հազիւ 10% ապահովագրված։ Ստամբօլի հեռաւոր թաղերն են դրանք, որոնք տարածվում են Սուլթան-Մահմուդ յայտնի թաղից այն կողմ, դէպի ցամաք և ոչ թէ դէպի ծով, որ քաղաքի լաւագոյն մասն է կազմում։ Թիւրք կառապանս, որ շատ լաւ ճանաչում էր այդ թաղերը, մանրամասն բացատրում էր ինձ այրված տեղերի և տների նշանակութիւնն և դիրքը։

Այրված տների ստուար մասը փայտաշէն է եղել, միմեանց վրա կռթնած։ Անցնում էինք այդ աւերակների միջից, նեղ և ծուռ ու մուռ փողոցներով, որոնց երկու կողմը դեռ ծուխը շարունակում էր բարձրանալ։

Մի կողմից հին և փայտէ շէնքեր, միմեանց վրա շարված նեղ և շատ անգամ էլ անանց փողոցներով, որոնց մէջ անծանօթը անշուշտ կը կորչէր, միւս կողմից էլ սոսկալի անվերջ քամին պատճառ են եղել հրդեհի այսքան սարսափելի չափեր առնելուն։ Քամին շարունակ տարածելիս է եղել այրված տներից կայծեր դէպի շրջակայ թաղեր, այնպէս որ հրդեհաշէջները կատարելապէս շփոթվել են. նրանցից մի խումբ իր ջրհանով միասին այնպէս է շրջապատվել կրակով, որ չէ կարողացել դուրս գալ հրոյ շրջանից և այնտեղ մնացել, այրվել։ Մարդկային զոհեր, կին և երեխաներ, եղել են բաւական մեծ թւով, բայց որչափ, դեռ յայտնի չէ։

Կառապանս ինձ տարաւ մի մեծ քարաշէն տան առջև, որի միայն պատերն ամբողջ էին մնացել։ «Այստեղ ապրում էր,—ասաց նա,—Ֆէրթէվ փաշա, պատերազմական մինիստրի օգնականը (նա որ գնացել էր եապօնական բանակը, ռուս-եապօնական

ղաքից դուրս և պաշարել է քաղաքը, բայց դեռ ոչ մի գործողութեան չէ ձեռնարկում, մինչև որ օժանդակ զօրքեր հասնեն, իսկ օժանդակ զօրքեր սպասւում են Թէհրանից և Մակուից։ Էյն-ուդ-Դովլէն մտադիր է, երբ օժանդակ զօրքերը և թնդանօթները կը հասնեն, ռմբակոծել ամբողջ քաղաքը, որովհետև յեղափոխականների և Սաթթարխանի դէմ կռւելը քաղաքի նեղ և ծուռումուռ փողոցներում անհնարին է, մանաւանդ որ յեղափոխականները տներից և պատուհաններից կրակելով զօրքի վրա՝ կարող են մեծ և զօրեղ դիմադրութիւն ցոյց տալ։ Թէ Էյն-ուդ-Դովլէն կամենում է ռմբակոծել քաղաքը, այդ երևում է նրանից, որ նա յայտնել է հիւպատոսներին և հայերին դուրս գալ քաղաքից, որպէս զի ռմբակոծութեան ժամանակ չը վնասվեն։

Միւս կողմից յեղափոխականները մտադիր են ռմբակոծութեան դէպքում գալ ապաստանել հայկական թաղը և այդտեղ նոյն իսկ սպանել մի քանի եւրոպացիներ և քրիստոնեաներ, որպէս զի օտար պետութիւնները միջամտեն։ Որքան էլ անհաւատալի է այս լուրը, բայց դրութիւնը կրիտիկական լինելով՝ ամեն տեսակ անակնկալ դէպքեր կարելի է սպասել։

ԹՈՒՐՔԻԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՇԵՄՔԻՆ

—

Երիտասարդ-Թիւրքերի կոմիտէտը ոչ միայն վարում է երկրի քաղաքական գործերը, այլ և սկսել է զբաղվել սուլթանի ընտանեկան գործերով։

Օգոստոսի 13-ին, իր նոր խորհրդատուների պահանջով, սուլթանը երկար տարիներից յետոյ առաջին անգամ թոյլ տուեց իր մօտ գալու գահաժառանգ Ռեշադ էֆէնդիին, մինչև իսկ վերջինիս թոյլատրվեց համբուրել փադիշահի ձեռքը։

Ինչպէս յայտնի է, գահաժառանգը ունի զօրեղ կուսակցութիւն, որը կը ցանկանար տեսնել նրան գահի վրա։

Դեռ ևս մի քանի օր սրանից առաջ Պոլսի մէջ տեղի էին ունենում ցոյցեր ի պատիւ Ռեշադի։ Թէ որքան անկեղծ ու սրտանց էր սուլթանի այդ հաշտութիւնը Ռեշադի հետ, ի հարկէ, ոչ ոքի յայտնի չէ։ Ցամենայն դէպս կառավարչական մամուլը, այսինքն երիտասարդ-Թիւրքերի օրգանները ողջունում են սուլթանական ընտանիքի մէջ հաշտութեան վերականգնումը։ «Իկդամ» թերթի ասելով, Թիւրք ժողովուրդը կը ցանկանար տեսնել Ռեշադին սուլթանի մօտ բոլոր սելամլըքների ժամանակ։

Սուլթանի հաշտվելը Ռեշադի հետ քաղաքական տեսակէտից այն մեծ նշանակութիւնը ունի, որ միանգամայն հիմնաւորում է Թիւրքական գահաժառանգութիւնը։ Այժմ միակ սև բիծը երիտասարդ-Թիւրքերի պայծառ երկնքի վրա՝ սիրիացիներից և ալբանացիներից կազմված երկրորդ գվարդիական դիվիզիան է, որ յայտնի է իր մոլեռանդութեամբ և դէպի հին կարգը ունեցած հաւատարմութեամբ։ Այդ դիվիզիան ինքնակալութեան վերջին յենարանն է։ („Рѣчь")

—

Վիէննա, 21 օգոստոսի

„Cor. Bur."-ին հաղորդում են Կ. Պոլսից, որ Հալէպի զինուորական իշխանութիւնների միջոցները քիւրդերի պարագլուխ Իբրահիմ-փաշային բռնելու ժամանակ՝ ի դերև ելան։ Դիարբէքիրի վալին հաղորդում է, որ Իբրահիմ-փաշայի որդին 4000 մարդով գալիս է միանալու հօր հետ։ Վալին խնդրում է զէնքի կոչել մի քանի բատալիօն պահեստի զինուորներ։

Օգոստոսի 16-ին Սերեսի սանջակի Ցինայի շրջանում Իստէրչէվօյի մօտ անյայտ անձեր սպանել են 3 բօլգարների։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 21 օգոստոսի

Այսօր առաւօտեան հողին յանձնվեց սուլթանի փեսայ Դամադ-Մահմուդի աճիւնը։ Թաղմանը ներկայ էին ժողովրդի ահագին բազմութիւն և զօրքերը։ Եկել էին սուլթանի ներկայացուցիչները։

Հանգուցեալի որդի Սաբահէդդինին առաջարկված է մինիստրական պորտֆէլ։ («Հ. Գ.»)

—

Կ. Պոլիս, 21 օգոստոսի

Արևելեան երկաթուղագծերի Սալոնիկի շրջանում գործադուլը շարունակվում է։

Ճանապարհորդական հաղորդակցութիւնը դադարած է։ Կ. Պոլիս-Ադրիանուպոլիս գծի վրա սկսվեց մասնակի գործադուլ։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 21 օգոստոսի

«Pol. Cor.»-ին Սոֆիայից հաղորդում են, որ այս տարվայ զօրախաղերը տեղի չեն ունենայ։ Պատճառը մի կողմից տնտեսելու ձգտումն է, միւս կողմից Թիւրքիայում ստեղծված երերի դրութիւնը։ Զօրքերի մեծ շարժումները հարաւային Բօլգարիայում թերևս առիթ տային սխալ մեկնութիւնների։ («Հ. Գ.»)

—

Ռուսաց գեներալ Շօստակը Սալոնիկ է յետ կանչել ռուսաց 12 ժանդարմական օֆիցերներին, որոնք պաշտօնավարում էին վիլայէթում։

—

«Temps»-ին հեռագրում են Պոլսից, որ, չը նայելով հերքումներին, այստեղ շարունակում են սպասել Թիւրքիայի կողմից իր իրաւունքների հանդիսաւոր յայտարարութիւնը Բօլգարիայի, Կրէտէի, Բօսնիայի և Հերցեգովինայի վերաբերմամբ։

—

Վիէննայից հեռագրում են «Бирж. Вѣд.» լրագրին, որ քաղաքական շրջաններում յուզված են սուլթանի հիւանդութեան մասին Կ. Պոլսից ստացված տեղեկութիւններով։ Այդ տեղեկութիւնների համաձայն, սուլթանը տառապում է ջղային հիւանդութեամբ և երկու գիշեր անքուն է անցրել։

Սալոնիկից հեռագրում են, որ Սալոնիկի վիլայէթում՝ Եանինում, Հալէպում և Տրապիզոնում արդէն սկսված է պարլամենտի պատուիրակների ընտրութիւնը։

—

Դիպլոմատիական շրջաններում, ինչպէս ասել էինք, լուր է տարածվել, որ ֆրանսիական նախկին մինիստր Ռուվիէն սուլթանի կողմից հրաւիրվում է Թիւրքական փոխառութիւնները կանոնաւորելու նպատակով։ Մօտ օրերս, «Нов. Вр.»-ի ասելով, մեծ վէզիրը այդ առիթով խօսակցութիւն է ունեցել Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Կօնստանի հետ։ Մտադրութիւն կայ Ռուվիէին նշանակել նրա համար յատուկ ստեղծվող ֆինանսական գործերի խորհրդատուի պաշտօնում։ Առայժմ այդ հարցը վերջնական լուծումն չէ ստացել, որովհետև Ռուվիէի հետ բանակցութիւնը դեռ ևս շարունակվում է։

—

Կ. Պոլսից ստացված տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ յափշտակութիւնները Թիւրքիայում օրըստօրէ աճում են։

Աւազակախմբերը վերջին ժամանակներս առանձնապէս սիրալիր ուշադրութիւն են դարձնում երկաթուղիների վրա. կողոպտում են կայարանները, գնացքների մէջ, մինչև իսկ գողանում են ամբողջ շոգեշարժներ։

Մօտ օրերս Սալոնիկում կողոպտիչները քշեցին շոգեշարժ մեքենան հիւսիսային գծով դէպի իր դէմ եկող մարդատար գնացքը։ Տեղի ունեցաւ ընդհարումն։ Ծառայողներից չորս հոգի սպանված են։ Երբ գնացքի խորտակումը տեղի ունեցաւ, աւազակները յարձակվեցին ճանապարհորդների վրա և լրիւ կողոպտեցին նրանց։

Պատահաբար անցնող օֆիցերների գնդակներից սպանված երկու աւազակների դիակից ենթադրում են, որ նրանք մօտ ժամանակներս ժողովրդի ձեռքով բանտից արձակված քրէական յանցաւորները պիտի լինեն։

Պոլսից հաղորդում են, որ Մօնաստիրից ստացված զեկուցումների հիման վրա՝ Նովոբազարի սանջակում նկատվում է անբաւականութիւն այնտեղ բանակ դրած աւստրիական զօրքերի դէմ։ Լուր է պտտում, որ աւստրիական զինուորների ու տեղական ազգաբնակութեան միջև ընդհարում է տեղի ունեցել։ Մահմեդականները համերաշխ են քրիստոնեաների անբաւականութեան հետ դէպի աւստրիացիները։ («Р. У.»)

—

Պոլսից «Бирж. Вѣд.» լրագրին հեռագրում են. «Դեսպանական շրջաններում լուրջ նշանակութիւն են տալիս 2 րդ գվարդիական դիվիզիան անվնասակար դարձնելու վերաբերմամբ Կ. Պոլսի կոմիտէտի արած նոր պահանջներին։ Կոմիտէտը յայտնել է զինուորական մինիստրին, որ 2 րդ գվարդիական դիվիզիան հարկաւոր է հասարակական ապահովութիւնը պահպանելու համար, ուստի պէտք է հեռացնել սուլթանական պալատից։ Զինուորական մինիստրը հրաժարվել է այդ պահանջի մասին զեկուցանել սուլթանին։ Նա այն համոզմունքն է յայտնել, որ սուլթանի կեանքը վտանգի կարող է ենթարկվել՝ եթէ 2-րդ գվարդիական դիվիզիան հեռանայ պալատից։ Ինքն ըստ ինքեան այդ պահանջը առիթ է տալիս ենթադրելու, որ կոմիտէտը վճռել է շտապեցնել սուլթանի գահընկէցութիւնը, որի համար պնդում են երիտասարդ Թիւրքերի աւելի ծայրայեղ խմբակները։ Արաբիայում հակասահմանադրական կուսակցութիւնը առաջնորդութիւն է կրել. արաբները պահանջում են պաշտօնանկ անել Մեքքայի էմիրին՝ Ալի փաշային և նրա տեղ նշանակել պետական խորհրդի անդամ Աբդիլ փաշային»։

—

Սալոնիկից ստացված տեղեկութիւնների համաձայն երիտասարդ-Թիւրքերի կոմիտէտը ձեռնարկել է իր կանոնադրութեան վերաքննութեան։

Առանձին մարդկանց չափից դուրս աչքի ընկնելու առաջն առնելու նպատակով, և որպէսզի Թոյլ չը տալ զարգանալու այն կուլտը, որով շրջապատված են այսօր Նիազի-բէյի և Էնվէր-բէյի անունները, կոմիտէտը յայտարարել է, որ նրա կազմի մէջ չը կան առանձին մարդիկ, որոնք կարողանային զովաբանվել իրանց խոշոր առաջնորդութիւններով։ Այն բոլորը, ինչ որ ձեռք է բերված, երկիրը պարտական է կազմակերպութեանը, որի ղեկավարութիւնը գտնվում է մի քանի հոգուց բաղկացած մասնաժողովի ձեռքում։ Նրանց անունները խիստ գաղտնի են պահվում։

—

Հաղորդել էինք, որ Թիւրքիայում շինվելիք երկու նոր պատերազմանաւերի անունները պիտի դրվեն Նիազի և Էնվեր։

Այժմ Թերթերից իմանում ենք, որ Նիազի բէյը դիմել է Թիւրքական «Թանին» թերթին, որ հանգանակութեամբ փողեր է հաւաքում շինվելիք պատերազմանաւերի համար, հետևեալ բնորոշ նամակով.

«Որովհետև ազգը սահմանադրութեամբ պարտական է ոչ թէ առանձին անհատներին, այլ զինուորական կոմիտէտների միացեալ ջանքերին, ուստի նոր մարտանաւերը, որ շինվելու են հասարակական դրամով, պէտք է կրեն ոչ թէ Նիազի և Էնվեր անունները, այլ Միդհատ և Քեմալ անունները։ Դրանցից մէկը Թիւրքական առաջին սահմանադրութեան ստեղծողն է, իսկ միւսը հռչակաւոր հայրենասէր, պատմաբան և բանաստեղծ է, որը ահագին ազդեցութիւն է ունեցել ներկայ սերնդի վրա, որ նրա գրուածքներով է կրթվել»։

Հարկ ենք համարում ասել, որ Քեմալը յայտնի «Վաթան» (Հայրենիք) անունով հայրենասիրական դրամայի հեղինակն է, որ գրվել էր 35 տարի առաջ, բայց արգելվել էր գրաքննիչի կողմից։

—

Կ. Պոլսից հեռագրում են, որ վերջին օրերում դարձեալ յամառ կերպով լուրեր են պտտում այն մասին, թէ մօտ ժամանակներում գահակալի փոփոխութիւն տեղի պիտի ունենայ։ Հաւաստացնում են, որ բարձրաստիճան զինուորական պաշտօնեաները, որոնք նոր են վերադարձել մայրաքաղաք, պնդում են Աբդիւլ-Համիդի հրաժարականի վրա։ Առաջիկայում փոփոխութիւն տեղի ունենալու նշաններից մէկն էլ այն է համարվում, որ գահաժառանգ Ռեշէդ իշխանի նկարը չափազանց մեծ քանակութեամբ է տարածվում ժողովրդի մէջ և ամեն օր հազարներով է առնվում մայրաքաղաքում։ Մանիֆեստացիաներ էլ են պատրաստվում գահաժառանգ իշխանի պալատի առաջ։

Պէտք է ենթադրել, որ այդ լուրերը հիմնված են Կ. Պոլսի կոմիտէտի նախկին ձգտումների վրա, որոնցից այժմ նա հրաժարվել է։ Մի որոշ դեր էլ խաղացել է այն հանգամանքը, որ իշխան Ռեշիդը և միւս իշխանները վերջին օրերում շատ յաճախ էին զբօսանքներ կատարում քաղաքում, ներկայ էին գտնվում Այա Սոֆիայի մզկիթում աղօթքի ժամանակ և իրանց մօտ պատգամաւորութիւններ էին ընդունում։ («Р. У.»)

—

Երիտասարդ Թիւրքերի կենտրոնական կոմիտէտը հանգանակութիւն է սկսել մահվան դատապարտված լրտեսների ընտանիքների օգտին, որոնց թիւը հասնում է 100-ի։ Մինչև այժմ հաւաքված գումարը հասնում է 40 հազար Թիւրքական ոսկու։ («О. Н.»)

—

Պոլսում վերջին ժամանակներս վերսկսվել է սուլթանին գահընկէց անելու լուրը։ Ասում են, որ այդ բանին ձգտում են մայրաքաղաք վերադարձած բարձրաստիճան զինւորական պաշտօնեաները, որոնք այդ նպատակով էլ կազմակերպել են գահաժառանգ Ռեշադի լուսանկարների մասսայական վաճառումը։ Նրանք մտադիր են մանիֆեստացիա կազմակերպել նրա պալատի առջև։ Այդ լուրերը, ինչպէս երևում է, հիմնված են կոմիտէտի նախկին ցանկութեան վրա, որից սակայն նա հրաժարվել է արդէն, և, երևի, այժմ հանդիսանում են, իբրև մարտական միջոցներ Թիւրքական երիտասարդութեան ամենաարմատական մասի համար։ Քիչ չէ նպաստում այդ լուրերին նաև այն հանգամանքը, որ Ռեշադը այժմ արտասովոր կերպով շատ շատ է զբօսանքի դուրս գալիս, այցելութիւններ կատարում, իսկ նրա որդիքը ներկայ են լինում Այա Սոֆիայի մզկիթում կրօնական արարողութեանը և մասնակցում են ազգային ստորագրութեան։ Երիտասարդ-Թիւրք կոմիտէտը հեռու է սակայն այդ ձգտումներից։ («О. Л.»)

—

«Б. В.» լրագրի թղթակիցը, արձանագրելով իր ունեցած խօսակցութիւնը պօլսական «Թանին» (Առաջադիմութիւն) թերթի ղեկավարների հետ, որը երիտասարդ-Թիւրքերի կոմիտէտի հայեացքների արտայայտիչն է հանդիսանում, ի միջի այլոց, մակեդոնական բօլգարների աւտօնօմիայի, առանձին պարլամենտի, բիւջետի և այլ պահանջների մասին հետևեալ կարծիքն է առաջ բերում, որ ասել են այդ ղեկավարները.

«Մենք չենք ընդունի այդպիսի աւտօնօմիա, այդպիսի «թագաւորութիւն թագաւորութեան մէջ» կամ «երկրորդ Բօլգարիա» Բալկանեան թերակղզու վրա։ Մենք ապակենտրօնացումն ընդունում ենք որոշ սահմաններում միայն. մենք հնարաւոր ենք համարում ներկայացուցչական ժողովներ տեղական գործերի քննութեան համար, այն էլ գեներալ-նահանգապետի նախագահութեամբ, և ուրիշ ոչինչ։ Բոլոր հպատակները հաւասարապէս պիտի վայելեն միևնոյն ազատութիւնները»։

Մի այլ տեղ նոյն թղթակիցը նկատում է, որ Պոլսում ամենքը, մինիստրները, ժուռնալիստները, երիտասարդ-Թիւրքերը և այլն, միաբերան ժխտում են հակայեղափոխութեան կամ ռեակցիայի գլուխ բարձրացնելու հնարաւորութիւնը։

Երբ ես նոյն խնդրի մասին հարց տուի բօլգարական դիպլօմատիայի երկու ներկայացուցիչներին՝ Նեստերովին և Պանիցային, նրանք երկուսն էլ ծիծաղեցին։

— Երևում է Ռուսաստանում շարունակում են անտեղեակ մնալ Թիւրքական գործերի դրութեանը, եթէ ու լուրջ կերպով հարցնում էք այդ մասին,—ասաց Պանիցան։—Նրանք, որոնց դուք կամարիլլա անունն էք տալիս, այժմ կամ նստած են բանտերում և կամ փախել են. ռեակցիան կորցրել է իր ոտքի տակի հողը։ Թէ ինչ կը լինի մի քանի տարուց յետոյ, ասել չէ կարելի, ի հարկէ, բայց կարելի է ասել, որ առ այժմ հակայեղափոխութիւն սպասել անկարելի է։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՕԼԵՐԱ

—

◆ Եկատերինա Բուրդուլօվան, որ տարված էր օգ. 20-ին խօլերային բարակը, իբրև խօլերայով կասկածելի հիւանդ, նրա արտաթորութիւնը բակտերիօլօգիական քննութեան ենթարկելուց յետոյ, երևացել է որ խօլերայով հիւանդ չէ։

◆ Մինչև երէկ քաղաքային խօլերային բարակներում կային երեք հիւանդ։

◆ Անդրկովկասեան երկաթուղիների կառավարչի կարգադրութեամբ երկաթուղագծերի վրա խօլերա երևալու պատճառով կազմված կան սանիտարական փոխ-մասնաժողովներ։

◆ Օգոստոսի 21-ին խօլերային նշաններով յանկարծակի հիւանդացաւ 15 տարեկան մի տղայ, Հայրիկ Կիրակոսեան, որը ապրում էր 8-րդ քաղաքամասում Սամաննի փողոցի վրա, տուն Ղազարեանի, № 5։ Հիւանդը տարվեց քաղաքային հիւանդանոցը։

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Այս օրերս առիթ ունեցանք տեսնելու հնագիտական մի քանի իրեր, գտնված հայկական շրջանում, որոնք կատարելապէս արժանի են յատուկ ուշադրութեան։

Նրանք յայտնագործված են անցեալ տարի ամառը Հին-Բեզարգիւմէքի, իսկ այժմեան Նոր-Բայազէտի գաւառում։

Մեր տեսածը երկու սկաւառակներ էին քանդականկարներով և չորս գդալներ—բոլորն էլ արծաթեայ։

Թէ ինչ ժամանակի են նրանք պատկանում՝ դժուար է որոշակի ասել ներկայումս։ Հաւանական է, որ նրանք հայկական տաճարի գիւտից առաջ են եղել շինված, որովհետև գդալների վրա տառերը յունական են։

— Ենթադրում են, թէ սկաւառակները Սասանեան շրջանի գործեր են,—յայտնեց Ա. Շուշանեան, որ բերել էր իրերը «Մշակի» խմբագրատուն մեզ ցոյց տալու։

— Ի՞նչ հիմք ունի այդ ենթադրութիւնը,—հարցրի ես։

— Այդպիսի կարծիք են յայտնել Պետերբուրգում հնագիտութեամբ հետաքրքրվող անձեր,—բացատրեց նա։—Մ. Բոտկինը այնքան մեծ նշանակութիւն տուեց նրանց, որ առաջարկեց երկու սկաւառակների համար հազար րուբլի գին. բայց մենք չը ծախեցինք, սպասելով որ նրանց գնէ մեր երկրացիներից կամ հաստատութիւններից մէկը։

Ի՞նչ են ներկայացնում այդ սկաւառակները։

Նրանք տարբեր են միմեանցից և ըստ երևոյթին պատկանում են բոլորովին տարբեր շրջանների։

Նրանցից մէկը, աւելի մեծը, կլոր մի սկաւառակ է, մօտ $4^1/_2$ վերշօկ տրամագծով։ Նրա վրա դրոշմված է արքայական մի որսորդութեան պատկեր։ Թագակիր որսորդը նստած է ձիու վրա։ Մի ձեռքին բռնել է սանձը, իսկ միւս ձեռքին խաղացնում է մի տէգ, որը ուղղել է դէպի իր որսը։ Թէ որսորդի և թէ նրա ձիու գլուխներին հովանաւոր են արեգակը և լուսինը։ Բացի այդ՝ թագաւորի առաջ վերևից օդի մէջ սաւառնում է պահապան հրեշտակը։ Որսորդի շուրջը ներքևում և կողքին քանդակված են որսի կենդանիները՝ առիւծ, վարազ, կինճ և արջ։ Վերջինս գտնվում է բլուրների գագաթին, ծառերի տակ։

Ինքը որսորդը ունի երկար մազեր, երկու ծոպերով։

Միւս սկաւառակի վրա, որ աւելի փոքր է, մօտ 4 վերշօկ տրամագծով, քանդակված է սփինքսային վիշապ նման ասորաբաբելական արծուավագր վիշապին՝ կտուցով, ականջներով և յովազի թաթերով։ Վիշապի շուրջը հասկահիւս եզրեր։

Քանդակները բարելիէֆի տեսակից են, մակերևոյթից բարձր։

Գդալները չորս են թւով, մէկը միւսից տարբեր, շինված են շատ նուրբ և գեղեցիկ։ Երկուսի վրա կան յունական տառեր։

— Ո՞ւր և ինչպէս գտնվեցին այդ իրերը,—հարցրի ես։

— Նրանք գտնվեցին Սևանայ լճի ափին գտնվող հայկական Օրդաքլու գիւղում մի հին բերդի պարսպի մօտ հողը փորելու ժամանակ։ Այդ բերդը ըստ երևոյթին շատ հին ժամանակի մնացորդ է։ Իրերը գտել են պատահաբար, տան շինութեան համար տեղ պատրաստելու ժամանակ։ Օրդաքլուի ուսուցիչ Անանիա Տէր-Գրիգորեան ներկայ է եղել այդ իրերը հանելու ժամանակ։

Սկաւառակները ոսկեզօծած են եղել։ Ոսկեզօծի հետքերը մնացել են մի քանի տեղերում։

Իրերը ներկայումս գտնվում են Ա. Շուշանեանի մօտ, որ ուսուցիչ է Բագւում։

Ա. Քալանթար

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

Հակառակ ռեակցիօնէրների սպասած արշաւանքին կովկասեան Փոխարքայի դէմ, որոնք ենթադրում էին, որ շուտով Կովկասում նրան կը փոխարինէ իրանց հաճելի թեկնածուներից մէկն ու մէկը, ինչպէս Մելլէր-Զակօմելսկին, գեներալ Զարուբաևը կամ Ռեննենկամպֆն ու նմանները, կոմս Վօրօնցով-Դաշկովի դրութիւնը ներկայումս աւելի ևս հաստատուն է դարձել և նրա հրաժարականի հնարաւորութիւնը, որ վճռված էր համարվում նրա գալուց առաջ, այժմ այլ ևս հաւանական չէ։

«Այժմ, ինչպէս պարզվում է,—ասում է «Рѣчь» լրագրի մէջ Լվօվը,—Փոխարքայի գալը հետևանք է նրա հակառակորդների գործողութիւնների. նրա կանչել տալը աջողեցնելով, նրանք արդէն վճռված բան էին համարում կոմս Վօրօնցով-Դաշկովի հրաժարականը։

«Կոմսի կողմն է, սակայն, ինչպէս ասում են, Պ. Ա. Ստոլիպինը։ Պրեմիէրի հետ անձամբ ունեցած տեսակցութեան ժամանակ կոմսն արտայայտել է իր հայեացքը Կովկասի ընդհանուր կառավարութեան վերաբերեալ մի քանի հարցերի մասին։ Պրեմիէրը համաձայնվել է նրա հայեացքներին և բարձր շրջաններում էլ պաշտպանել նը-

---

պատերազմական գործողութիւններին հետևելու). երբ տեսաւ, որ իր տունը շրջապատվել է կրակից, նա աղաչեց, որ անպատճառ իր գրատունը, գրքերով և թըղթերով, ազատեն. Անցածի մասին հոգ չէր անում. և ազատեցին միայն գրատունը»։

Տեղ-տեղ, ովազիսի նման, բաղդի բերմունքով, անվնաս էին մնացել փոքրիկ քարաշէն, նոյնիսկ փայտաշէն տներ և խանութներ։ Հրդեհի վայրին համարեա կից էր սադրազամ Քեամիլ փաշայի տունը, որ անվնաս էր մնացել։ Աւերակների միջից անցուդարձ էին անում ոստիկանական պաշտօնեաներ և տուրիստներ իրանց կօդակներով։ Այն փողոցներում, որտեղից կառքը կարող էր անցնել, մենք պատահում էինք սայլերի, որոնց վրա կըրում էին հրդեհից ազատված կարասիք։ Պատահեցի Թիւրք և մանաւանդ հրէայ պատանիների, որոնք դեռ ևս մխացող աւերակները փորում էին, արժէքաւոր իրեր գտնելու յոյսով. ուրիշներն էլ երկաթէ վանդակներ և այլ իրեղէններ քաշելով տանում էին։ Քանդված տների միջին կանգնած մնացել էր ջրուղու պարիսպը, որի վրայից անցուդարձ էին անում Թաղերի երեկվայ բնակիչները, որոնք իրանց ընտանիքներով պատսպարվել էին մեծ մասամբ մօտակայ մզկիթների բակերում։

Այրված թաղերը գլխաւորաբար խորդուբորդ և զառիվայր տեղեր էին։

Այժմ հանգանակութիւն է բացված հըրկիզեալներին օգնելու համար. սուլթանն իր կողմից 5000 լիրա (45,000 րուբլի) է նուիրել։ Նպաստից յանձնաժողով է կազմվել ներքին գործերի մինիստրի նախագահութեամբ։ Սպասում են այստեղ թէ Եւրոպայից էլ դրամական նպաստ կը ստացվի։

Երեկոյեան, երբ քաղաքից վերադառնում էի Բօսֆօր, շոգենաւում լսում էի տխուր ակնարկութիւններ հայերի կողմից, թէ հին ռեժիմի մի քանի պաշտպանները կարող էին այժմ մահմեդական մոլեռանդ և տգէտ ամբոխը գրգռել, թէ սահմանադրութեան ճիշտ ամսադարձի օրը այդպիսի մի մեծ ժողովրդական աղէտի երևան գալը առհասարակ վատ նշան պէտք է համարել, Աստուծոյ կողմից իբրև պատիժ ուղարկված, մանաւանդ որ այրված տների մէջ կայ եղել նաև բանակի ապստամբութեան նշանաւոր հերոսի՝ Նիազի բէյի տունը։

Բարեբաղդաբար սահմանադրութեան առաջ բերած նոր վիճակը ժողովրդի բոլոր խաւերին այժմ այնպիսի մեծ գոհունակութիւն է պատճառել, որ այդպիսի «աստուածային պատիժներ» երկիւղը այլևս ոչ ոքի վրա չի կարող ազդել, թէև երբեմն պատահում են այնպիսի դէպքեր, որոնք ընդհանուր կարգը փոքր ինչ խանգարում են. ինչպէս օրինակ այսօր շոգենաւի մէջ երկու Թիւրք միմեանց հետ բռունցքի հարուածներով կռուեցին, որովհետև մէկը պաշտպանում էր սուլթան Համիդն quand même, իսկ միւսը նրա դէմ խօսում։ Բայց այսօրինակ դէպքեր գոնէ մինչև հիմա դեռ հազւագիւտ են։

Սարուխան

ջանց: Այդ բանն արդէն պարզ կերպով երևաց օգոստոսի 15-ին, Փոխարքային ընդունելու ժամանակ: Ներկայումս Փոխարքան բանակցութիւններ է վարում Պ. Ա. Ստոլիպինի հետ մինիստրների խորհրդին ներկայացրած իր նախագծերի մասին:

«Փոխարքայի հետ միասին Կովկասից եկած անձինք չեն կասկածում, որ ամեն ինչ քարիւղաջող ելք կունենայ կոմս Վորոնցով-Դաշկովի համար. նրանք, համարեա, հաւատացած են, որ Փոխարքան կը վերադառնայ իր պաշտօնին:

«Եթէ ներկայացված ծրագիրը հաւանութիւն ստանալու լինի, կոմսը երկու շաբաթ էլ կը մնայ Պետերբուրգում, մասնակցելու մինիստրների խորհրդի նիստերին, ուր մըտադրութիւն կայ քննութեան ենթարկել Կովկասի մերձաւոր բարենորոգումների հարցերը: Նրանից յետոյ կոմս Վորոնցով-Դաշկովը մի առ ժամանակ կը գնայ իր կալուածքը և ապա այնտեղից ուղղակի Թիֆլիս: Հաղորդում են, որ դրութիւնը յօգուտ կոմսի փոխվել է բաւականին լուրջ պայքարից յետոյ: Նրա դէմ յարուցված են եղել մի շարք մեղադրանքներ, որոնց իմաստը վաղուց արդէն արտայայտված է եղել մամուլի մէջ: Բացի դրանից վերջին օրերս ստացվում էին մի շարք հեռագիրներ ու խնդիրներ զանազան միապետական կազմակերպութիւններից ուղղված Փոխարքայի դէմ: Հաղորդում են այն ևս, որ այդ «Թղթերի» գրելու գործում մասնակցութիւն են ունեցել նորակազմ «ազգային միութեան» ականաւոր գործիչներից մի քանիսը:

«Այդ բոլորն անաջողութիւն է կրել: Կոմս Վորոնցով-Դաշկովի քաղաքականութեան արդարացութեան համար առաջին արտայայտիչն են այն պատճառաբանութիւնները, որ նրա շնորհիւ Կովկասում այժմ համեմատաբար հանգստութիւն է տիրում: Ի միջի այլոց, իբրև սիմպտոմ ի նկատի է առնվել այն հանգամանքը, որ կոմսի յոբելեանը տօնելիս մասնակցել են Կովկասի բոլոր ազգութիւնների ներկայացուցիչները:

«Լուրերին նայելով պրեմիեր Ստոլիպինը գտել է, որ ներկայումս բարձր ադմինիստրացիան փոխելը անժամանակ է և կարող է աննպաստ տպաւորութիւն ունենալ ծայրերկրի իրերի դրութեան վրա: Այդ հանգամանքը շաղկապում են հարեւան Թիւրքիայի անցքերի հետ»:

ԱՐՏԱԿԱՐԳ ՊՏՂԱԲԵՐՈՒԹԻՒՆ

«Մշակի» մէջ մենք հաղորդել էինք Գ. Ղարագեօզեանի համառօտ զեկուցումը այն փորձերի մասին, որ նա արել էր Ալեքսանդրոպոլում՝ բուսցնելու հացահատիկ նոր եղանակով՝ «չիթիլ արած»:

Մեր երկրում նոյնատեսակ փորձեր արել են մի քանի անձեր էլ, բայց մինչև այժմ չեն հրատարակել ստացած արդիւնքների մասին:

Աչքի առաջ ունենալով փորձերի հետաքրքրական և նշանակալից լինելը, ես դիմեցի Գ. Ղարագեօզեանին առաջարկութեամբ, որ նա տայ մանրամասն տեղեկութիւններ իր արած փորձերի մասին:

Գ. Ղարագեօզեանը ուղարկեց մեզ զեկուցագիր, որ այստեղ զետեղում ենք:

Ցանկալի է, որ ուրիշ փորձերի մասին էլ հաղորդվէին տեղեկութիւններ, որպէսզի խնդիրը պարզաբանված լինէր բազմակողմանի:

Ա. Ք.

*

Ալէքսանդրոպոլ, 11 օգոստոսի

Ստացայ ձեր նամակը և ամենայն ուրախութեամբ շտապում եմ կատարել ձեր իրաւացի ցանկութիւնը:

Ես ևս ձեզ պէս շատ զգոյշ էի վերաբերվում այդ կուլտուրային, որը պ. Դեմչինսկին անուանում է „грядковая культура хлѣбныхъ злаковъ" և որը ես յարմար եմ համարում անուանել «հացաբոյսերի չիթիլ»:

Ես ևս վախենում էի հիասթափումից, բայց այժմ շատ խորը հաւատացած եմ, որ այս կուլտուրան մեր գիւղատնտեսութեան մէջ պիտի մտցնի մի յեղափոխութիւն:

Փոքր գիւղատնտեսները և գիւղացիները ամենաաջող կերպով կարող են գործադրել «հացաբոյսերի չիթիլը», որը շատ յարմար է փոքր տնտեսութիւնների համար, և դրանով միանգամայն ապահովել իրանց կուշտ գոյութիւնը:

Չիթիլ տնկելը բոլորովին դժուար բան չէ: Լազօղլեխում ես տեսել եմ ծխախոտի ահագին պլանտացիաներ: Այդ ահագին տարածութեան հողերի վրա ծխախոտի չիթիլը տնկում էին կանայք և երկու սեռի պատանիներ: Գործը արագութեամբ առաջ էր գնում և ոչ մի դժուարութիւն չէր նըկատվում: Գիւղացու ընտանիքի 13 տարեկանից սկսած բոլոր անդամները, պատանիները և կանայք, շատ աջող և մեծ հեշտութեամբ կարողանում են այդ գործը կատարել: Մի այրի կին մի շաբաթում կարող է այնքան չիթիլ տնկել, որքան հարկաւոր է նրա ամբողջ մի տարվայ հացը մատակարարել:

Ռուսաստանում եղած բազմաթիւ փորձերը, որոնց մասին մանրամասն տեղեկութիւններ կան պ. Դեմչինսկու «Урожай» շաբաթաթերթում, ցոյց են տալիս, որ մի գիւղացին, որն այժմ ցանում է 5—10 դեսեատին, նոյն բերքը ստանալու համար կարող է բաւականանալ մի դեսեատին հողի վրա չիթիլ տնկելով և այդ չիթիլը տնկելու համար նա երբէք կարիք չի ունենայ կողմնակի մշակ վարձելու, այլ իր ընտանիքի անդամները կարող են այդ գործը կատարել:

Այժմ գիւղացին մէկ դեսեատինի վրա ցանում է 8 պուդ, իսկ չիթիլի եղանակով ցանելու համար մէկ դեսեատինին բաւական է 24—30 ֆունտ:

Իմ արած փոքրիկ փորձը ցոյց տուեց, որ ամենավատ հողում և ուրիշ աննպաստ պայմաններում չիթիլ արած գարին տուեց ահագին բերք:

Դժբաղդաբար, հող չունենալու պատճառով, ես չը կարողացայ փորձս անել աւելի մեծ դիրքով և ստիպված եղայ բաւականանալ իմ բնակարանի փոքրիկ բակով, որի հողը ծանր կաւ է և շինութիւնից մնացած խիպար: Հողը երկար տարիներ ոտի տակ մնալով այնքան ամրացել էր, որ նրան բահով քանդելը անկարելի էր, և ես ստիպված եղայ քանդել փետատով և կարելին չափ քարերը, խիպարը ջոկել:

Մի փոքրիկ մարգ պատրաստելուց յետոյ՝ մի մասը յատկացրի սերմի համար, իսկ աւելի մեծ մասը թողի ազատ՝ չիթիլը տեղափոխելու համար:

Ապրիլի 13 ին ցանեցի 12 հատիկ գարի, հատիկները մէկը միւսից մէկ վերշօկ հեռու:

Երեք շաբաթից յետոյ, երբ ծիլերը բաւականին մեծացան, այդ փոքրիկ բոյսերը իրանց արմատով հանեցի և արմատներին կպած հողը թափ տալուց յետոյ, տեղափոխեցի բոյսերը չիթիլի համար թողած մարգի միւս մասը, տնկելով մէկը միւսից 3 վերշօկ հեռու և մէկ վերշօկ աւելի խոր նախկին նստածից:

Սկզբից նորատունկ չիթիլները թառամեցին, բայց մի քանի օրից յետոյ սկսեցին զուարթանալ և աճել:

Յուլիսի 15 ին արդէն սկսեցին հասկերը ծաղկել և մինչև յուլիսի վերջը գարին այնքան հասել էր, որ ճնճղուկները կոցահարում էին: Ուստի ստիպված եղայ մի փոքր շուտ քաղել:

Բացի հողի վատութիւնից, շրջակայ պատերի ստուերը, որ շուտով ընկնում էր մարգի վրա, նոյնպէս մի մեծ աննպաստ պայման էր բոյսերի նորմալ զարգացման համար:

Այդպիսի աննպաստ պայմաններում 12 չիթիլից ստացվեց 256 հասկ:

Ամենափոքր թուփն ունի 20 հասկ և ամենամեծը՝ 33 հասկ:

Ամեն մի հասկը միջին թւով ունի 28 հատիկ. ուրեմն 12 հատիկից ստացվեց 7208 հատիկ:

Այն թուփը, որը 33 հասկ ունի և որի լուսանկարն ուղարկել եմ «Մշակի» խմբագրատունը, ես հանեցի արմատներով, բայց որովհետև հողը շատ էր ամրացել, հանելու ժամանակ արմատների մեծ մասը կտրատվեց և մնաց հողի մէջ: Այդ թուփը այժմ «Ախուրեանի» խմբագրատանն է, որտեղ գիւղացիները խմբերով գալիս են տեսնելու:

Իմ նկարագրած ամենաաննպաստ պայմաններում ստանալով այդպիսի հետևանք, դատապարտելի է չը հաւատալ, որ այս կուլտուրան խոստանում է մտցնել մեր գիւղացու հողագործութեան մէջ ահագին փոփոխութիւն, որը պէտք է ազատէ գիւղացուն անընդհատ կիսասովից:

Այժմ ես արդէն ցանել եմ աշնան ցանքսի ցորեն մօտ 48 քառակուսի սաժէն լաւ հողի վրա՝ չիթիլ տնկելու համար: Այդ հողը յատկացրել է փորձերի համար պ. Ջիթողցեանը և խոստացել է գարնան ցանքսի համար յատկացնել ևս մէկ դեսեատին հող: «Ախուրեանի» խմբագրութիւնը սիրալիր կերպով նպաստում է ինձ այս գործում և մտադիր է մի առանձին մաս յատկացնել «Ախուրեանի» մէջ այս փորձերի մասին տեղեկութիւններ տալու համար:

Շատ ուրախ եմ, որ դուք առանձնապէս հետաքրքրվում էք այս գործով:

Ցանկալի է, որքան կարելի է շուտ տարածվի այդ կուլտուրան գիւղական մասսայում, որը կարելի է փորձեր անելով գիւղերում: Այդ փորձերի կատարումը գիւղական ինտելիգենտների պարտականութիւնն է:

Ես, որ ամբողջովին նուիրված եմ այս գործին, կը շարունակեմ իմ փորձերը:

Գ. Ղարագեօզեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութեան գանձարկղի քննութիւնը շարունակվեց և օգոստոսի 21 ին ու երէկ: Քննութիւն են անում փոխ-նահանգապետի պաշտօնակատար Րիտէլ, արքունական պալատի պաշտօնեայ Գրիգորեան և նահանգական ատեանի քարտուղար Գերասիմէնկօ: Առայժմ պարզվել է, որ վերջին երկու տարում քաղաքը զօրքերի բնակարանավարձ տուել է 120,000-ից աւելի րուբլի:

◆ Պետերբուրգի հայոց եկեղեցական հոգաբարձութեան խորհուրդը Կ. հ. բ. ընկերութեանը դպրոցներ բանալու համար յատկացրել է 3400 րուբլի, և Բագուի հայոց կուլտուրական միութեանը՝ 8000 ր. նոյն նպատակով:

◆ Այսօր Թիֆլիսում լոյս տեսաւ վրացերէն լեզուով նոր օրաթերթ «Էկալի» (Փուշ) անունով:

◆ Բէլիյ Կլիւչի ճանապարհին պօստի կողոպտված տեղն է մեկնել յիսուն կօզակներով Թիֆլիսի գաւառապետի գլխաւոր օգնականը:

◆ Թիֆլիսեցիներին ոչ անծանօթ անտրպրէնեօր Գրէյշէնը ներկայումս բանակցութիւններ է վարում արքունական թատրոնի վարչութեան հետ, որ այդ թատրոնը նրան կապալով տրվի 5 տարի շարունակ:

◆ Օգոստոսի 21-ին, գիշերվայ ժամը 12 ին, Բարոնսկայա փողոցում № 8 տանը ապրող ազնուականուհի Իւլիա Կօվինսկայան իր 16 տարեկան Մարգարիտա աղջկայ հետ միասին վերադառնում էր կլուբից: Երբ նրանք մտնում են իրանց բնակարանի պօդեզդը, նրանց վրա է յարձակվում մի անյայտ մարդ և ֆիննական դանակով մի քանի հարուածներ է իջեցնում նրանց կրծքի և փորի մասերում: Աղջիկը, որ գիմնազիայի V դասարանի աշակերտուհի է, տեղն ու տեղը մեռնում է, իսկ մայրը կարողանում է դուրս փախչել և ուշաթափ ընկնում է փողոցում: Հիւանդանոց տարվելուն պէս՝ մեռնում է: Սպանողը, ինչպէս ասում են, նոյն տան մէջ ապրողներից մէկի իմերէտին խոհարար Եւստաֆիս Կուտելաձէն է, որը անյայտացել է: Քննութիւն է կատարվում: Միջոցներ են ձեռք առնված ոճրագործին գտնելու համար:

◆ Ներքին գործերի մինիստրութեան ընդհանուր գործերի վարչութիւնը հաղորդել է Փոխարքայի դիւանատան, որ օգոստոսի 11-ին մինիստրը կարգադրել է Փոխարքայի անունով փոխադրել 93,450 րուբլի՝ իբրև նպաստ տալու Կովկասի քաղաքներին զօրամասերի բնակարանների վարձի համար այս տարվայ ընթացքում:

◆ Թիֆլիս է եկել առևտրի և արդիւնաբերութեան վարչութեան վերատեսուչ Ս. Գուլիշամբարով:

◆ Մոսկվայում ապրող Նախիջևանի վաճառական այրի տ. Ե. Պապովեան 50,000 րուբլի է նուիրել Բորչալուի գաւառում գիւղատնտեսական դպրոց բանալու համար:

◆ Բժ. Վ. Արծրունին 1500 րուբլի է նուիրել Բ. Կ. միութեան գաղթական սեկցիային Նոր-Բայազէտի գաւ. Ղուլալի գիւղում տարրական դպրոց բանալու համար:

◆ Թիֆլիսում, Նիկօլաևսկի փողոցում, № 1 տանը, Ե. Արվանեանի ալիւրի պահեստից գրաւել են 1800 տոպրակ կասկածելի ալիւր:

◆ Երեքշաբթի, օգոստոսի 26-ին, Մանգլիսից Թիֆլիս կը վերադառնայ կադետական կորպուսը:

◆ Կ. բ. ընկ. շինութեան կէս՝ Ղարաջեանի հաշւով կառուցվող Արեշեանի տունը կաւարտվի հաւանօրէն սեպտեմբերի կէսերին:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Օգոստոսի 21-ին Թիֆլիսի քաղաքացի Արշակ Բուդաղեանը յայտնել է ոստիկանութեանը, որ Միքայէլեան փողոցում № 122 տան մէջ գտնվող իր բնակարանից, իր բացակայութեան ժամանակ անյայտ մարդիկ գողացել են զանազան իրեր 500 րուբլու արժողութեամբ: Գողութեան մէջ կասկածվում են նրանց աղախին Աննա Կազակովան և իր ամուսին Կալինը, որոնք և կալանաւորված են:

◆ Օգոստոսի 21-ին, ցերեկվայ ժամը 4-ին Թիֆլիսի շերամապահական կայանի մօտ տարածանկէ գնդակի մի հարուածով վերջ է տուել իր կեանքին մի անյայտ մարդ: Գնդակը կպել ու անցել է սրտից: Դիակը ուղարկված է հիւանդանոց անձնասպանի ով լինելը երևան հանելու համար:

◆ Օգոստոսի 21-ի երեկոյեան ժամը 7-ին Պանասեվէնէ փողոցում, № 9 տանը, յանկարծամահ է եղել Կարս քաղաքի բնակիչ Տիգրան Գրիգորեան Սարաֆեանց 33 տարեկան հասակում: Դիակը ուղարկված է հիւանդանոց:

◆ Օգոստոսի 22-ին, առաւօտեան ժամը $4^1/_2$-ին, կալանաւորված են թիւրքահպատակ եղբայրներ Մելիք և Մեհրակ Բեգօյեանցները, որոնք մեղադրվում են 1906 թուի յունիսի 30 ին Գրիգոր և Աղեքսանդր Վարդանեանների սպանելու գործում:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Չը նայելով ժողովրդական լուսաւորութեան մինիստրի արած յայտարարութեան՝ թէ ազատ ունկնդրուհիները ոչ մի դէպքում չեն մնայ համալսարանում, այնուամենայնիւ Մոսկվայի համալսարանի պրոֆեսորների խորհուրդը յոյս է տածում, որ իր յարուցած միջնորդութիւնը՝ մի տարուց ոչ պակաս համալսարանում եղած ազատ ունկնդրուհիներին թոյլատրելու համար՝ կը յարգվի, և առաջարկում է առայժմ չը վերցնել վկայաթղթերը համալսարանի դիւանատնից: («Рѣчь»)

◆ Հելսինգֆորսից տեղեկութիւն է ստացվել, որ ֆինլանդական իշխանութիւնը միջոցներ է ձեռք առել հեռացնելու սօցիալիստական այն ընկերութիւնները, որոնք կարող են փչացնել Ռուսաստանի ապահովութեանը: Այդ մասին, «Бирж. Вѣд.» լրագրի ասելով, համապատասխան պաշտօնեաները հարկաւոր ցուցմունքներ ստացել են արդէն: Միաժամանակ հսկողութիւն է նշանակված նաև Գանգէի վրայով Ֆինլանդիա եկողների վրա:

◆ «Слово» լրագիրը հաղորդում է, որ մշակված անցագրային նոր կանոնադրութիւնը արմատական փոփոխութեան պիտի ենթարկվի: Մի տարուց շուտ հազիւ թէ անցագրային այդ կանոնադրութիւնը ներկայացվի Դումային:

◆ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը ստացել է ստատիստիքական տեղեկութիւններ 1907 թըւականի ընթացքում ռուսական բոլոր երկաթուղիների վրա տեղի ունեցած պատահարների քանակի մասին: Այդ կողմից, «Бирж. Вѣд.» լրագրի ասելով, ամենից գերազանցում է սիբիրեան երկաթուղին, որտեղ գծերից դուրս եկած կամ ընդհարված վագոնների թիւը համնում է 388-ի, գնացքների մէջ կատարվել են գողութիւններ՝ 130, խորտակումից փչացվել են 30 հոգի, հրդեհի դէպք՝ 21, պօստատար գնացքներում պօստային կողոպուտ՝ 156. ընդամենը 727 պատահար:

◆ Պետերբուրգի կանանց բարձրագոյն դասընթացներում, շինութիւնը վերանորոգութեան ենթարկելու պատճառով, ուսումը վերսկսվելու է սեպտեմբերի 15-ից: («Р. У.»)

◆ Պետերբուրգի այն գործարաններում, ուր չէ մտել դեռ աշխատանքի վարձատրութեան համար ամերիկական սիստեմը, վերջին ժամանակներս սիստեմատիկ կերպով իջեցնում են վարձագինը: Բանւորական բողոքներին ադմինիստրացիան պատասխանում է, որ նոր պայմաններին չը համաձայնվող բանւորները կարող են հաշիւները վերցնել և հեռանալ: Այդ հողի վրա բաւականին թւով բանւորներ արձակված են Սան Գալլի գործարանում, ի թիւս որոնց այնպիսիները, որոնք 5 տարուց աւելի է ինչ ծառայում են այդ գործարանում: Նոյն ձևով է վարվում, թէև զգոյշ տակտով, Լեսների գործարանի վարչութիւնը: Մի քանի գործարաններում բանւորները իրանց տեղերից չը զրկվելու համար հարկադրված են եղել համաձայնվել իջեցված վարձագներին. Ֆըրանս ռուսական գործարանի պղնձաձուլարանի բաժնում վարձագինը այնքան է իջեցված, որ բանւորը հազիւ վաստակում է իր հացքեարային վճարը: Բանակցութիւնները անցնում են անօգուտ: («Рѣчь»)

ՄԱՄՈՒԼ

Մենք առիթ ունեցանք «Մշակի» մէջ խօսելու անվայելուչ և անպատեհ չափազանցութիւնների մասին, որ կատարվում է Կ. Պօլսում խուժանապետների ղեկավարութեամբ հայ ամբոխի ձեռքով սուլթան Աբդիւլ-Համիդի վերաբերմամբ: Կատարեալ զզուանք է զգում մարդ, տեսնելով թէ ինչպէս հայ ժողովրդի արժանապատւութիւնը, այն ժողովրդի, որի 300,000 զաւակներին սրով-թրով խողխողել է, տանջել, նահատակել է սուլթանը, ոտնակոխ է լինում հայ ամբոխի արձակած «փադիշահըմըզ չոք եաշա» գոռումներով:

Այդ չափազանցութեան դէմ բողոքում է և Ժնեւի «Դրօշակ» հայ թերթը, ասելով.

Չափը պահպանելու առաքինութիւնը տրված չէ Կ. Պօլսի մեր հրապարակագիրներին: Ազատ մամուլի հրատարակումը առիթ եղաւ նրանց համար՝ ստրկամտութեան նոր ու այլանդակ ցոյցեր անելու: Մի կողմից՝ ազատութեան ապաթէօզ, միւս կողմից սանձարձակ ներբողներ ազատութեան մեծագոյն դահճի հասցէին: Եւ այդ ներբողները այնքան խանդավառ են, այնքան զգացված, որ դժուարանում էք հաւատալ, թէ նրանք կեղծ են: Վրդովեցուցիչ է: Դա «փոլիթիկ» չէ, այլ պարզապէս ստորաքարշութիւն: Աւելի կոպիտ վիրաւորանք անկարելի է հասցնել՝ այս մեծ օրերում՝ հայ ժողովրդի և հարիւր հազարաւոր նահատակների յիշատակին: Ոչ ոք չի պահանջում այդ խմբագիրներից՝ ազատութեան օրերում արշաւանք սկսել Աբդիւլ-Համիդի դէմ. բայց հօ կարելի էր՝ թէկուզ յանուն վայելչութեան՝ լռութեան տալ այդ չարաշուք անունը...

*

Նոյն բողոքը և տրտունջը անում է նաև Փարիզի «Հնչակ» թերթը, ասելով.

Չը խորհող, չը մտածող ամբոխը, առանց ցեղի և կրօնի խտրութեան, եռանդուն ցոյցեր է անում սուլթանին: Անգիտակից այդ ամբոխն է, որ բռնակալութիւնների համար պատուանդան է հանդիսանում ամեն տեղ և ամեն ժամանակ. «սահմանադրութեան» վերահաստատումի համար սուլթան Համիդին արևշատութիւն ցանկացող և կատաղօրէն ծափեր զարկող ամբոխը վաղը նոյնքան ընդունակ է նոյն այդ արևշատութեան խօսքերը անել՝ եթէ «սահմանադրութեան» ջնջումը գայ,— այդ մենք տեսած ենք անցեալի մէջ: Ոչխարային բնազդներով առաջնորդվող խաժամուժ ամբոխը չէ, որ Համիդի արժանաւորութեան և նրա անկեղծութեան չափանիշը պիտի տայ: Քաղաքական այդ երեխայից աւելի զգոյշ պիտի լինել, քան նրա հրամանատարութիւններով առաջնորդվել:

Սուլթան Համիդը «սահմանադրութիւնը» չէ հաստատել, այլ նրան ստիպել են այդ անելու. ուրեմն արևշատութիւնները, օրհներգութիւնները, մաղթանքները ընկած զոհերին և պայքարողներին պէտք էր ուղղել:

Եթէ մեր երկու գլխաւոր յեղափոխական կուսակցութիւնները իրանց օրգանների բերանով դատապարտում են մեր շեշտած չափազանցութիւնները, մնում է ցաւել, որ նրանք չը կարողացան խուժանապետներին զսպել և վայելչութեան սահմանների մէջ պահել:

*

Նախկին պատրիարք Օրմանեանի դէմ կատարված ամբոխային ցոյցերի առիթով, Մարսէլի «Արմէնիա» թերթը գրում է.

Կ. Պօլսէն օգոստ. 8 ին հեռագրած են եւրոպական թերթերին հետեւեալը.

«Երէկ թշնամական ցոյցեր տեղի ունեցան նախկին պատրիարք Օրմանեանի տան առջև: Կը մեղադրեն զինք թէ վարչական ծանր սխալներ գործած է: Նախկին պատրիարքը դատական նախարարութեան պաշտօնատունը տարուեցաւ: Ամէնքն ալ, նոյնիսկ թիւրքերը, կը պարսաւեն այդ ցոյցի հեղինակ եղող հայերը»:

Պէտք է ըսել որ այդ հեռագիրը տխուր տպաւորութիւն մը ունեցաւ մեր վրայ ալ, որ Օրմանեանի պաշտօնանկութեամբը ուրախացած էինք:

Ի՞նչ կը նշանակէ հայոց պատրիարքը մը դատելու համար բռնել տանիլ յանձնել դատական նախարարութեան: Մենք հայերս ազգ. երեսփոխանական ժողով ունինք, որի իրաւասութեան կը պատկանի դատել մեր պատրիարքը: Փառք Աստուծոյ, մեր ազգային սահմանադրութիւնն ալ վերստացանք հիմա, որով ազգ. երեսփոխանական ժողովի գումարումն ալ հիմա անկարելի չէ Օրմանեանը դատելու համար: Այսու ամենայնիւ, ազգը միշտ ունի իրեն ներկայացուցիչ մարմին մը, որի իրաւասութեան կը պատկանի իր պատրիարքի գործերը դատելու կարգադրութիւններն ընել. խումբ մը ցուցարարներ հայոց պատրիարքը Բ. Դրան դատական իշխանութեան յանձնելու և այդ կերպով մեր ազգային դարաւոր մէկ իրաւասութիւնը խախտելու և նոր վերստացուած ազգ. սահմանադրութիւնն ալ այսպէս իրենց ձեռքով ջնջելու ինչպէս կը յօժարին:

Մեզ զարմանալի կը թուի այս ամենը և աւելի մանրամասն ու ճիշտ տեղեկութիւններ ունենալու համար կը պարտաւորինք սպասել Կ. Պօլսի հայ թերթերին: Հետևեալպէս առայժմ վերապահումով միայն կընենք վերօգրեալ դիտողութիւնները, եւրոպական թերթերին եկած այդ կարճ հեռագրի վրայ հիմնուելով:

Ամէն պարագայի մէջ, կը փափաքինք որ մեր թիւրքիահայ ազգակիցներ հեռու կենան այնպիսի ծայրայեղ վարմունքներէ, որոնք կրնան փնասակար դառնալ ազգային շահերին:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Վարդաշէն, 8 օգոստոսի

«Մշակ» լրագրի մէջ մի բաց նամակով դիմումն էի արել գիտակից վարդաշէնցիներին, որ իւրաքանչիւրը իր բարոյական պարտքն իրագործէ Վարդաշէն գիւղի դպրոցի նկատմամբ, բայց դժբաղդաբար մինչև այսօր ոչ ոք այդ պարոններից՝ արձագանք չը տուաւ կոչիս:

Ով որ հետևել է ուխախօս Վարդաշէն գիւղի գլխով անցած արհաւիրքներին, թէ ինչպէս գօլիցինեան օրերում հեծում էր այդ գիւղը բաղդախնդիր պնակալէզների խաղերից, նա քաջ պիտի գիտակցէ և ներկայ ճգնաժամը, որ երկու տարի գոյութիւն ունեցող ծխական դպրոցը շնորհիւ այդ անհատների պիտի փակվի: Այդ անհատները՝ գիւղը տակն ու վրա արին, աքսորել տուին հայ քահանային երկու ականաւոր գիւղացիների հետ և, միացած տեղում գտնվող մի շարք չինովնիկների հետ, խեղճ գիւղացիներին այն դրութեան հասցրին, որ խանութեան օրերին գիւղացիք փառք էին տալիս:

Այդ ստորադասներն էլ երես առած հայերի ամենանուրբ զգացմունքներն էին անարգում և դարձեալ անպատիժ մնում: Ոյժով խլեցին հայ ուխտատեղին 1903 թ.: Հայերը դիմադրութիւն ցոյց տուին և որի համար այսօր 18 ականաւոր գիւղացիներ բանտ պիտի նստեն մի տարուց մինչև երկու տարի: Գործն այժմ պալատումն է: Իսկ այսօր էլ այդ պարոններից մեծը, չը նայած իր եղբայր քահանային հեռացրեց ասպարէզից կառավարութիւնը, չէ դադարում ոտնձգութիւններ անելուց: Նա այժմ զինվել է վերաբացված հայ ծխ. դպրոցի դէմ, և այդ գործին դժբաղդաբար աջակցութիւն են ցոյց տալիս հայ հասարակութեան տականքներից մի քանիսը անձնական գծուծ հաշիւներից դրդված:

Լսելով որ գիւղի հոգաբարձութիւնը մի աղերսով դիմել է Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան և նպաստ խնդրել դպրոցի գոյութիւնը յարատևելու համար, այդ ընկերութեան յարգոյ անդամների լուրջ ուշադրութիւնն ենք հրաւիրում, որ օգնութիւն այդ գիւղին կրկնակի անհրաժեշտ է, քան մի այլ տեղ, որովհետև վերայիշեալ բորենիները ժանիքները սրած յօշոտման են պատրաստ:

Իսկ ինչ վերաբերում է այն պարոններին, որոնք մինչև այժմ դպրոցական հաշիւները չեն վերջացրել և իմ դիմումից յետոյ էլ Զաքարիայի պապանձումն են պահպանում, դրանց ստիպված եմ այժմ հասարակական դատին յանձնել:

Սիլլա

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

(Սեփ. թղթ.)

Սալմաստ (Հին-քաղաք), 27 յուլիսի

Արդէն իրականութիւն է. բայց արդեօք դա իրականութիւն — Թիւրքիան ազատագրված... Երբ սիրելիդ մահվան լուրն ես լսում, կամ երբ հիւանդութեան անկողնում, մահվան ճգնաժամի մէջ կարծած հիւանդ մարդուն տեսնում ես՝ հրաշքի պէս՝ մի օր ոտքի ելած, չես հաւատում քո լսածին ու տեսածին: Վերջին պօստով ստացված լրագիրները, որպէս արդէն աշխարհածանօթ փաստ, տեղեկացրին Թիւրքիայի սահմանադրութեան մասին, բայց մեր չը հաւատալն եկաւ Թիւրքիայի այդ տարիներից, դարերից ի վեր փափագած երազած օրը: Դեռ կովկասեան թերթերը Սալմաստ չը հասած, տեղումս հեռագիր էր ստացվել և լուր էր պտտում այդ մասին, սակայն մեզ անհաւատալի էր թւում, որ սուլթան Աբդիւլ-Համիդ-խանը, այս աշխարհը թողնելուց առաջ, քաւարանը մտնէր. Ինչպէս կարելի էր հաւատալ, մի

կը հաւատար. այն երբեմնի դրախտ, բայց այժմ դժոխք դարձրած երկիրը տեսնողին, կրկնում ենք, բնականաբար անհաւատալի պիտի թւար, իսկ այժմ վերջապէս փաստ է—Թիւրքիան ազատագրված, սահմանադրված։ Մեզ, Թիւրքահայերիս համար, այլևս ինչ մի ուրախութիւնը կարող է փոխարինել դրան. ոչ մի։ Կեցցէ Թիւրքիայի սահմանադրութիւնը։ Կեցցէ սահմանադրութիւնը, բայց նախ կեցցէ ազատութեան համար գործադրված նախապատրաստական աշխատանքը. ինչ որ՝ դժբաղդաբար՝ անմիջականօրէն չը կարողացաւ անել մի քանի հարիւր հազարաւոր հայ մարդկանց արիւնը, նոյնը աջողեցրեց անել, սակայն Թիւրք ապստամբական անարիւն, թէև ուժեղ ու նախապատրաստված Թափր-պատիւ աշխատողներին։

Այս բոպէիս մենք թէև չափազանցօրէն տրամադրված ենք յաւատես լինելու ձեռք բերված՝ Թիւրքիայի սահմանադրութեան վերաբերմամբ, այնուամենայնիւ համարձակ կարելի է ասել, որ XX դարը իր այս ակտով խիստ նշանաւոր եղաւ։ Մարդկային առեղծագործող հանճարը ինչ էլ տայ մարդկութեան՝ ըստ մեզ՝ չէ կարող հաւասարվել այս մեծ-գործին, որով կը դադարի մարդկանց անմեղ կեանքերի երկարձ ժամանակեայ չարաչար սպառումը. որով դադար են առնելու այնքան ծանր ու սոսկալի տանջանքներն և զրկողութիւնները, կատարված մարդու ձեռքով, կատարված մարդու վրա դարերից ի վեր։ Եւ ուրախալի այս իրականութեան հանդէպ հայ մարդու գլխից ակամայ անցնում են այս տեսակ արխուր մտքեր. հայը, Թիւրքիայի այդ դարաւոր քաւութեան նոխազը, Թիւրքիայի քաղցաւոր ապագայ, նրա ազատագրութիւնը ձեռք բերելու համար մեծագոյն չափով զոհ բերող և այնքան հաւատով ու էներգիայով աշխատող այս ազգը որքան դիմումներ, որքան աղաչանք արեց, որքան արցունք թափեց Արեւմուտքին, այդ իր քաղաքակրթութեամբ գովական և ամենակարող Եւրոպային, սակայն ապարդիւն։ Լոյսը ծագեց դարձեալ Արեւելքից,—մեր ստրկական շղթաները ջարդուեցին միևնոյն բռնապետի, դահճապետի ձեռքով, կամ ճիշդ՝ նրա ձեռքով. իսկ այս փաստի առաջ կարմրելու խոկի պարտաւորվում է արդեօք քրիստոնեայ և ամենաքաղաքակիրթ անուանված Եւրոպան. իսկ մարդասիրութեան դիմակը վերցրած այդ սոսկալի չաշհալը, սրանով, սրանից յետոյ շահելու է թէ փասվելու. Թող խորհի…

Աչքներս լոյս, Թիւրքահայեր, դէպի երկիրը. մեր մարդասիրութիւնը վերջ ունեցաւ. Թիւրքիան ազատագրված է։ Թւում է թէ երազ չէ այլևս այս անգամին, բանաստեղծական բացագանչութիւն չէ…

Ստեփան Յովհաննիսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՃԱՊՕՆԻԱ

Ինչպէս են ճապօնացիք կոտորում կորէացիներին.—«Köln. Gaz.» լրագրի Սէուլի թղթակիցը հաղորդում է, որ անցեալ տարւայ օգոստոսից ճապօնական զինւորներն ու ոստիկանական գործակալները կոտորել են 16,000 ապստամբ կորէացիներ։ Վերջիններս էլ իրանց կողմից յետ չեն մնում նրանցից, կոտորելով, թէև պակաս թւով, ճապօնացիներ և իրանց հայրենակիցներից այնպիսիներին, որոնք ծառայում էին ճապօնացիներին։ Կորէան աւերվում է ոչ թէ միայն սրով, այլ և հրով։ Ապստամբները այրել են մօտ 6000 տներ։ Կորէայի կայսրը իր սեփական միջոցներից նուիրել է 200,000 մարկ հրկիզեալների օգտին, կառավարութիւնն էլ իր կողմից տուել է 150,000 մարկ։

ԳԵՐՄԱՆԻԱ

Բաւարական խելագար թագաւորին գողանալու անաջող փորձ.—Մօտ ժամանակներս մի խումբ մարդիկ փորձ են արել գողանալու բաւարական խելագար թագաւոր Օտտօնին Ֆիւրստենրիդ ամրոցից, ուր նա բանտարկված է։ Սանդուղքներ դնելով նրանք բարձրացել են պարտէզը շրջապատող քարէ բարձր պատի վրա։ Նրանցից մէկը, իջնելով պարտէզը, նստում է այն նստարանի վրա, ուր խելագար թագաւորը սովորութիւն ունի հանգստանալու, և սպասում է, նրա հետ խօսակցութիւն սկսելու. Անծանօթին նկատում են թագաւորի մօտ նշանակված պահապանները և կալանաւորում։ Իր արտաքինով նա նման է իտալացու։ «Անկոչ» այցելուները ամենևին գողեր չեն, այլ տուրիստների կարգի մարդիկ, որոնք դէպի թշուառ խելագարը ունեցած կարեկցութիւնից դրդված կամենում էին ազատութիւն տալ նրան։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

21 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր կայսրը Բարձրագոյնս հրամայել բարեհաճեց շնորհակալութիւն յայտնել շուրջ-բալտիկեան ժամ.-գեներալ-նահանգապետ բարօն Մելլեր Զակոմէլսկուն և էստլանդեան նահանգապետ Կորոստովցևն այն տի պաշտօնակատար օրինակելի կարգ ու կանոնի համար, որին ականատես եղաւ Նորին Մեծութիւնը Ռեվելում եղած ժամանակ։

Թուրքեստանի երկրի մի քանի տեղեր բում ուժեղացված պահնորդական դրութիւնը երկարվում է մինչև 1909 թ. յուլիսի 16-ը։

Զինւորական գլխաւոր դատարանը փոխեց Շուշու բնակիչ Գրիգոր Սայամօվի մահվան դատավճիռը։

Հաստատվեց Երևանի ժամ. զինւորական դատարանի դատավճիռը Խանոյեան եղբայրների, Բուստոմովի և Խաչատրեանի գործի առիթով, որոնք մեղադրվելով պետական գանձատան պաշտօնեայի վրա զինված յարձակում գործելու մէջ՝ դատապարտվեցին ցմահ աքսորի։

Սենատը Պետական Դումայի անդամ Կոսորոտովի բողոքագիրը թողեց անհետեւանք, Զինովեվի և Մորոզովի վերաբերութեամբ դատարանի վճիռը հաստատեց։

Րոստովում Դ./վ. խոլերայի սկզբից մինչև օրս հիւանդացել են 560, մեռել են 252 հոգի։

ՕՐԵՕԼ։ Միջնակարգ դպրոցների կառավարիչների ժողովում մի քանի կանոններ մշակվեցին աշակերտութեան վրա դպրոցից դուրս հսկողութիւն սահմանելու մասին։

ՆՈՎՈՐՈՍԻՅՍԿ։ Բացվեց պտղաբուծութեան, բանջարանոցային և գինեգործութեան ցուցահանդէսը։

ԿԻԵՎ։ Սիբիրի նահանգները գաղթեցին գիւղացիները։

ԻՎԱՆՕՎՕ (Վոզնեսենսկի նահ.)։ Հինգ չարագործներ յարձակվեցին Սավինօ երկաթուղային կայարանի վրա։ Տարած գումարի քանակը յայտնի չէ։

ՍՄՈԼԵՆՍԿ։ Կողոպտվեց ս. Աստուածածնի եկեղեցին։

ԵԱԼՏԱ։ Քաղաքագլուխը հերքում է Եալտայում և Ղրիմի հարաւում խոլերա երևալու մասին տարածված լուրերը։

ՎԱՐՇԱՎԱ։ Քաղաքիս վաճառականների ընկերութեան նախաձեռնութեամբ օգոստոսի 20-ին Լոնդոն մեկնեցին 59 ներկայացուցիչներ առևտրական յարաբերութիւններ ընդլայնելու համար։

Սեպտեմբերի 2-ին այդպիսի ճանապարհորդութիւն տեղի կունենայ և դէպի Վիէննա։

ՄՕՍԿՎԱ։ Նահանգում երևան են հանել խոլերայի երեք դէպք, որից մէկը վերջացել է մահով։

ՎԻԷՆՆԱ։ Ֆրանց Յովսէփ կայսրը մերժեց ընդունել երկրագործութեան մինիստր Էրէնգոֆի հրաժարականը։

ՀԱԱԳԱ։ «Ֆրէյսլանդ» զրահանաւը երեկոյեան մեկնեց Վենեցուէլայի ջրերը։

ԲԵՐԼԻՆ։ «Fr. Zt.» ը չէ հաւանում, որ գերմանական կառավարութիւնը մարոկկեան հարցի նախաձեռնողն է հանդիսանում։ Լրագրի կարծիքով, գերմանական կառավարութիւնը կատարեց անակնկալ սրարշաւ, որ ոչ մի օգուտ չէ բերում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿՈՒՀԻ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՈՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ի. Ֆ. ՄԱՐՑԻՇԵՎՍԿԻ—5½—6½ ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ.,
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Վառ. եւ Ստ. Սմբատեանների
Միջնակարգ դպրոցների երկսեռ երեխաների նախապատրաստական ուսումնարանում (Րօստովից Դ/վ) ընդունելութիւնները սկսված են։ Բնակարանը համապատասխանում է առողջապահական բոլոր պահանջներին։ Դասերը սկսվում են 1-ին սեպտեմբերի։ Կայ երկու գիշերօթիկի տեղ։
Սօլօլակ, փողոց Պասկևիչի, № 13.
(չ. ու. չ) 10—3

Գնում եմ
կալուածք, զավոդ, ֆաբրիկա։
С.-Петербургъ. Ул. Гоголя 4, кв. 4.
1—1

Հայուհի, որ գիտէ ֆրանսերէն և երաժշտութիւն (րօյալ), կամենում է դասեր ունենալ տեսական և գործնական։ Գիտէ մասամբ և գերմաներէն։ Մէկ դասի համար կարելի է փոխարէն վարձի ստանալ առանձին սենեակ իր բոլոր յարմարութիւններով և ճաշ։ Պարապմունքը 2 ժամ։ Գիտէ և րէմինգտօնի վրա աշխատել։ Կամենում է ծառայութեան մտնել թէ Թիֆլիսում և թէ Թիֆլիսից դուրս, կամ ուղեկցել արտասահման։ Հասցէն՝ Сололакская ул., д. № 10, верхній этажъ.
3—1

Լայպցիգի համալսարանի գիւղատնտեսական բաժանմունքն աւարտած
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ցանկանում է գիւղական ուսուցչի պաշտօն վարել։
Ցանկալի է Ղազախի կամ Ղարաքիլիսայի շրջանում։
(23, 26) 2—1

ՏԱՆԱԿԵՐՏ (Վ. Ագուլիսի մօտ)
գիւղի երեք բաժանմունքով երկսեռ դպրոցի համար հարկաւոր է հայ ուսուցիչ-ուսուցչուհի։ Վարձատրութիւնը՝ 500 րուբ. ռոճիկ և բնակարան երկու սենեակից։ Սանների թիւը 60.
3—1

Ս. ՍԱՐԳՍԻ ծխական դպրոցի հոգաբարձութիւնը
յայտնում է, որ ազատ տեղեր կան դպրոցիս II և III բաժանմունքներում։ Խնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 25—31, առաւօտեան 9—12 ժամը։
(շ. կ. չ.) 3—1

Հայոց եկեղեցական-ծխական դպրոցներում 14 տ. փորձառութեամբ Ներսիսեանում ուսած
✳ Ցեցգաւոր եւ ձայնագրագէտ ✳
ՈՒՍՈՒՑԻՉ-ՔԱՀԱՆԱՅ
իր պաշտօնատեղի կլիման չը տանելով ցանկանում է տեղափոխվել։ Պայմանների մասին դիմել՝ Тифлисъ. К. Апрѣльянцъ въ армянскую консисторію.
(շ. ե) 2—1

ԹԻՖԼԻՍԻ Թանգոյեան ս. Նուշա-Երկսեան օրիորդաց երկդասեան դպ. հոգաբարձութիւնը յայտնում է, որ նորեկների ընդունելութիւնը տեղի կունենայ օգոստոսի 25 ից մինչև 30-ը, վերաքննութիւնները՝ օգոստոսի 28-ին, 29-ին և 30-ին, իսկ ուսման սկիզբը սեպտեմբերի 1-ին։
(23, 26, 28) 3—1

ԵՐԶՆԿԵԱՆՑ
ԳՐԻԳՈՐԻՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅԻ
✻ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ✻
«Թւաբանական խնդիրներ» (Գոլդենբերգական) ա. մասն 30 կ.
» » բ. » 35 կ.
«Աշխարհագրութիւն» 60 կ.
«Քրիստոնէական բարոյագիտութ.» 50 կ.
«Դասաւանդման խորհուրդներ» 20 կ.
«Բնախօսութիւն» Ֆոստրի 30 կ.
«Պատմութիւն մանկավարժութ.» 1 ր.
Տպագրվելու են
«Թւաբանութեան մեթօդիկա», «Բնագիտութիւն», Մանկավարժութիւն»։
(շ. ե.) 2—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ
Յովսէփ Մելիք-Ջանեանցի
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Տեղափոխվել է
Сололакская ул. д. № 10 (рядомъ съ аптекой Оттена)
Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ և պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։ Աւանդվում են ռուս, հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ։ Այստեղ կազմակերպված են և խմբական պարապմունքներ միջնակարգ դպրոցների բարձր դասարանները մտնել ցանկացողների համար։ Առարկաներ աւանդելու համար հրաւիրված են մասնագէտ ուսուցիչներ։ Ի միջի այլոց աւանդվում է և իտալերէն։
(օ. մ.) 5—2

Մերվի հայոց ծխական երկսեռ դպրոցի համար հարկաւոր է
ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ
1) Շաբաթական 23 դաս. (հայոց լ. 11, թւաբան. 5, նկարչ. 5, վայելչ. 2։ 2) Շաբաթական 23 դաս. (կրօն 6, պատմ. 2, իրագն. 4, բնակ. գիտ. 3, աշխարհ. 2, երգ. 6, և պիտի պատրաստէ ու ղեկավարէ երգեցիկ խումբ եկեղեցու համար։
Պայմանները՝ իւրաքանչիւրին 700 րուբլի ռոճիկ, ճանապարհածախք, ծառայ, բնակարան և վառելիք մտնում են որոշված ռոճիկների մէջ։
Ցանկացողները կարող են դիմել հոգաբարձութեան հետևեալ հասցէով՝ Попечителю А. Аветисяну.
(21, 23, 26) 3—2

Դպրոց եւ Մանկական պարտէզ
Ն. Ս. Ցաուրիւնեանի
Երկու սեռի մանուկներ պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար։
Ընդունելութիւնը օգոստոսի 25-ից։
Ուսումը սեպտեմբերի 1-ից։
(21,23,24,26,28,30,31, 2,5,7) 10—2

Հրատարակութիւն Աւետիս Ղօզոսեանի հրատարակչական ֆօնդի
Լոյս տեսաւ
ՓՈՆՋԻԿ
մանկական երգարան եւրոպական նոտաներով
Նիւթ հայ դպրոցների I, II և III բաժանմ.
Կազմեց ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆՑ
Գինն է 30 կօպ.։
Դիմել «Գուտտենբերգ» և «Փարոս» գրախանութներին և կազմողին՝ Նորաշէնի օր. ծխական դպրոց, Дворянская № 17.
(ապ.) 10—4

Սրանով առաջարկում եմ Գանձակ նահանգի Կարեագինի գաւառի Հադրութ գիւղի բնակիչներին՝ Աղէքսան Մազունցեանին, Գրիգոր Ասլանեանին և Եփրեմ-Սրապեանին, որ այդ պարոնները, այս յայտարարութիւնը լոյս տեսնելուց մի ամսվայ միջոցում, յետ վերադարձնեն իմ հօրս՝ Մանաս Գրիգորեանին 1906 թ. մայիսի 2-ին բռնութեամբ և սպառնութեամբ վերցրած 1000 րուբ. պարտամուրհակները և 10,000 րուբ. գրաւականի ստորագրութիւնը, որոնք ներկայումս գտնվում են Մազունցեանի մօտ։
Վլադիկավկազ, 20 յուլիսի 1908 թ.
Խսարով Մանասեան Գրիգորեանց
(օ. մ.) 5—4

ԴՊՐՈՑ
ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ
Երկու սեռի մանուկների համար։ Ընդունելութիւնը օգոստոսի 27 ից, ուսման սկիզբը սեպտեմբերի 6-ին։ Բեհբութեան փողոց, սեփ. տուն № 25.
10—3

Լոյս տեսաւ և վաճառվում է
Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆԻ
ԴԱՍԱԳԻՐՔ
ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
մարդ, կենդանի, բոյս և հանք
Դասընթացք հայոց ժողովրդական և քաղաքային դպրոցների III, IV և V տարիների համար։
Հիմնովին բարեփոխված, հարստացրած նոր նիւթերով և մօտ 130 նկարներով։
Գինն է 70 կ.
Դիմել Թիֆլիս Ա. Աթանասեանին «Խաթաբալայի» խմբագրատուն, կամ «Գուտտենբերգ» գրախանութին։
10—2

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“
գրավաճառանոցում վաճառվում են
ԽԱՆ-ԱԶԱՏԻ
հետևեալ աշխատութիւնները.
1) Ինչ է սահմանադրութիւնը 10 կ.
2) Ինչպէս պէտք է կազմել սահմանադրութիւնը 10 կ.
3) Դաշնակցութիւնը և իր ղեկավարները 15 կ.
4) Յիշողութիւններ Խրիմեանի մասին 20 կ.
5) Ներկայացուցչական կառավարութիւն, Կաուցկու, հեղինակի պատկերով 40 կ.
5—3

Թեղեք ԳԻՒՂԻ եկեղեցական-ծխական դպրոցի համար հարկաւոր է
մի հմուտ
ՈՒՍՈՒՑԻՉ
Ցանկացողները պէտք է դիմեն հայոց կօնսիստորիայի դիւանատուն՝ յիշեալ գիւղի ուխտատեղիի վանահօրը՝ Դիոնեսիոս վարդապետին։
(21, 23, 26) 3—2

Սրանով յայտնում եմ ի գիտութիւն յարգելի
ՀԱՑԱՎԱՃԱՌՆԵՐԻ,
որ ՍՏԱՒՐՈՊՕԼ ՔԱՂԱՔՈՒՄ ԲԱՑԵԼ ԵՄ ՀԱՑԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Գլխաւոր նպատակս է մատակարարել Անդրկովկասեան քաղաքներին ամեն տեսակ ճագանքի եւ ալիւր թէ տեղից և թէ շրջակայ կայարաններից։
Ալիւրը պատրաստում եմ սեփական ընտիր ցորենից՝ հետևեալ տեսակների—«կրուպչատկա», «սէյանկա» և «բազմօլ»։
Հետաքրքրվողներին իսկոյն ուղարկում եմ նմուշները՝ միաժամանակ նշանակելով և գները։
Գների զգալի փոփոխութեան ժամանակ կլիէնտներին յայտնվում է հեռագրով։
Խնդրում եմ ի նկատի ունենալ, որ ամեն մի ապրանք ես գնում եմ առաջին ձեռքից, այնպէս որ այդ հանգամանքը հնարաւորութիւն է տալիս ինձ վաճառել ուրիշներին ամենամատչելի գներով։
Յուսով եմ, որ յարգելի վաճառականները անուշադիր չեն թողնի իմ ֆիրման։
Պատուէրները կը կատարվեն կարելոյն չափ շտապով, ամենայն ճշտութեամբ և բարեխղճօրէն։
Թղթակցութիւնները հայերէն և ռուսերէն լեզուներով։
Յարգանքով Մ. Յ. ՖԱԼԱԿԵԱՆՑ
Հասցէ՝ Նամակի համար. Ставрополь.-губ., М. А. Фалакянцу, почт. ящ. № 48.
Հեռագրի համար. Ставрополь.-губ., Фалакянцу.
(շ.) 50—1

Ժողովրդական Լուսաւորութեան Մինիստրութեան իրաւասութեան տակ Պետերբուրգի Կայսերական Գեղարուեստական Ճեմարանի վկայագրով
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆԻ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Երկու սեռի անձերի համար
ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ
Պարապմունքները լինում են 5—7 ժ.
(Բացումը սեպտեմբերի 15-ից)
Աւանդելի առարկաներն են՝ նկարչութիւն (սև, ջրաներկ և իւղանկար), գծագրութիւն, գեղագրութիւն (հայ և օտար լեզուներով), ձեռարուեստ, փորագրութիւն, քանդակագործութիւն, չթեղ ձեռագործ, հեռանկար (պերսպեկտիվա), գոյների և ստուերների տեսութիւն։
Բոլոր ուսուցիչները մասնագէտներ են։
Աւարտողները ստանում են ատեստատներ։
Կուրսերին կից կայ գեղարուեստական գրադարան։
Տարեկան վճարն է 40 ր. կամ ամսական 5 ր., դպրոցականների համար 25 ր. և 3 ր.։ Յաճախել ցանկացողները թող բարեհաճեն գրաւոր յայտնել այդ մասին կուրսերի հիմնադրին, որից և կարելի է ստանալ աւելի մանրամասն տեղեկութիւններ. Հասցէն՝ почт. ящ. 133.
(շ.) (ապ.) 6—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի եւ Լ. Շանթի
ԿԱԶՄԱԾ
ԼՈՒՍԱԲԵՐ
Հայերէնի պատկերազարդ դասագիրքը
Ա. ՏԱՐԻ — II տիպ, բարեփոխված, Գինը 30 կ.
Բ. ՏԱՐԻ — Գինը 45 կ.
Գլխաւոր պահեստները՝ Թիֆլ. „ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“ գրավաճառանոցում, Тифлисъ книжный магаз. „Гуттенбергъ“
Բագւում „Сотрудникъ“ գրավ.
Գումարով առնողներին 20% զեղչ։
ՆՄՈՒՇ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ ուսուցիչներն և դպրոցները կարող են ստանալ «Գուտտենբերգ» գրասենեակից ՁՐԻ (գանձ ուղարկվում են 14 կ. ճանապարհածախսով)։ 10—8
(շ.շ.)

Типографія „Экономія“ Ав. Мугдусіакопова съ С-ми
Большая Бакинская ул. № 3.